

ԵՐՈՒՍԱՂԵՄ, 1 (ՌՈՅԹԸՐԶ).- Իսրայելի վարչապետ Արիել Շարոն յառաջիկայ շաբաթ ժողով մը պիտի գումարէ պաղեստինցի ղեկավարներու հետ, հաղորդեց Իսրայելի պետական ռադիոկայանը երէկ: Վարչապետ ընտրութենէն ետք, Շարոն ցարդ որեւէ նման հանդիպում չէ ունեցած: Ո՛չ Իսրայել, ո՛չ պաղեստինցիք հաստատեցին, սակայն, լուրը: Ըստ ռադիոկայանին՝ հանդիպումը պիտի կայանայ յառաջիկայ 2-րդ շաբաթի, Երուսաղէմի մէջ: Պաղեստինեան կողմէն ներկայ պիտի ըլլան Պաղեստինի խորհրդարանի նախագահ Ահմէտ Քորէյ, Մահմուտ Ապպաս եւ Մոհամէտ Ռաշիտ:

### ՅԱԵԼԵԱԼ ԱՐԺԷՔԻ ՏՈՒՐՔԸ ԴԱՐՉԱՒ Ի ԶՕՐՈՒ

Յաելեայ արժէքի տուրքը սկսաւ գործադրուիլ երէկ: Անոր յաւելումով վառելիքի արժէքը 1800 լ.Ո. ուստում մը արժանազորեցին: Ստեղծուած են թեր ու դէմ կարծիքներ, թէեւ կառավարութիւնը կը փորձէ արդարացնել որոշումը:

Պէյրութի նաւահանգիստի տնօրէնութիւնը երէկ առաւօտ սկսաւ յաելեայ արժէքի տուրք գանձել տեղական շուկայի սպառումին համար ներածուած ապրանքներուն վրայ:

Ելեւնուտքի նախարար Տուտտ Սիւհիրա երէկ հաստատեց, որ յաելեայ արժէքի տուրքը բեռ մըն է քաղաքացիներուն ուսերուն, այսուհանդերձ այս տուրքին գործադրութեան դրական արդիւնքները հնարաւորութիւն պիտի ստեղծեն, որ շարունակենք տնտեսական եւ դրամական բարեկարգումները, պահպանելու համար կայունութիւնը եւ մեղմացնելու պետութեան պիտոճէական բացը, ըսաւ ան:

Սիւհիրա դիտել տուաւ, որ պենսիոնի սակերու յաելումը սահմանափակ անդրադարձ պիտի ունենայ միայն կարգ մը ապրանքներու եւ ծառայութիւններու վրայ:

Ուժանիւթի եւ ջուրի նախարար Մոհամէտ Ապտէլ Համիտ Պալտուն երէկ հաւաստեց, որ յաելեայ արժէքի տուրքը ազդեցութիւն պիտի չունենայ երկկտրակնութեան սակերուն պարագային: Այս տուրքին օրէնքը որդեգրուեցաւ կառավարութեան եւ խորհրդարանի համաձայնութեամբ, դարձանելու համար պետական պարտքերու հարցը, ըսաւ ան:

Շար.՝ էջ 2

### ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԴԵՍՊԱՆ Ս ԵՔ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԸ



Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երէկ ընդունեց Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեանը: Յովնանեան ըսաւ, որ քննարկուած են երկու երկիրներու միջեւ երիտասարդական եւ մարմնակրթական յարաբերութիւնները պարզացնելու միջոցները:

Նախարար Յովնանեան նաեւ ըսաւ, որ նախապատրաստութիւնները կը կատարուին ստորագրելու համար Լիբանան - Հայաստան գործակցութեան փրոթոգով մը. որուն միջոցով Լիբանան պիտի աշխատի օգտուելու բարեկամ Հայաստանի երիտասարդական եւ մարմնակրթական փորձառութենէն, վերադարձուելու եւ պարզացնելու համար իր այս մարզը:

Նախարար Յովնանեան դիտել տուաւ, որ այս ծրագիրը մաս կը կազմէ նախարարութեան այն ձեռքբերումը, որոնց նպատակն է ամրապնդել Լիբանանի երիտասարդական եւ մարմնակրթական կեանքը եւ առիթ ընծայել մեր երիտասարդութեան՝ դրսևորելու իր կարողութիւնները:

Այն յոյս յայտնեց, որ Փետրուարի վերջերը պատրաստ կ'ըլլայ 2002ի գործակցութեան փրոթոգովը: Բարեկամ պետութիւններու հետ նման համաձայնագիրներով Լիբանան քայլ պիտի պահէ միջազգային մարմնակրթական կեանքին հետ, ըսաւ նախարար Յովնանեան:

### ՄԻԶԱԴԷՊ՝ ԾԻԱՀԻ ՄԷՋ. 9 ՎԻՐԱՒՈՐ

Երէկ, Շիահի մէջ միջադէպ մը ծագած է՝ երկու կազմակերպութիւններու հետեւորդներու միջեւ, ֆութպոլի դաշտի մը գծով, կը հաղորդէ ազգային լրատու գործակալութիւնը, առանց յիշելու կազմակերպութեանց անունները: Ըստ «Ռոյթըրս»-ի՝ անոնք Հրկայլան եւ Ամայն են: Լիբանանեան բանակի եւ ներքին ապահովութեան ուժերու պիտուորները միջամտած են եւ օդը կրակած են: Աւելի ուշ, լարուածութիւնը հետպահեւտէ մեղմացած է եւ անդորրը՝ վերահաստատուած: Արձանագրուած է ինը վիրաւոր. հինգ պիտուոր, չորս պինեալ:

### ՇԱՐՈՆ ՈՃԸ ԿԸ ՓՈԽԷ ԱՐԱՖԱԹԻ ԴԵՍ ԻՐ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

«Մաարի» օրաթերթին կողմէ հրապարակուած հարցազրույցի մը մէջ, Իսրայելի վարչապետ Արիել Շարոն ըսաւ, որ մտադիր չէ վնաս հասցնելու պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսսէր Արաֆաթի: Նոյն հարցազրույցին ընթացքին, որուն մէջ մարք հաղորդուած էր Հինգշաբթի օր, Շարոն ցաւ յայտնած է, որ 1982ին Իսրայել չէ մարքագործած Արաֆաթը:

«Մաարի»-ի հարցազրույցին մէջ Շարոն ըսաւ, որ այսօր, Իսրայել նպատակ չունի Արաֆաթի անձին դէմ արարք մը գործելու, ոչ անդամախառնելու պաղեստինեան իշխանութիւնը: Շարոն ասելուց, որ Արաֆաթի դէմ արարք մը պիտի վնասէ նաեւ Իսրայելի. հետեւաբար այդ ուղղութեամբ որոշումներ չկան:

Շարոն պոլշացուց Արաֆաթը՝ իսրայելեան քաղաքներու դէմ հրթիռարձակումէ, որ վտանգաւոր նոր հանգրուան մը պիտի բանայ 16ամեայ խռովութիւններուն մէջ: Աջակողմեան վարչապետը խլած է կայերը պաղեստինեան իշխանութեան հետ եւ Արաֆաթը անկարելու կը նկատէ խաղաղութեան գործընթացին յառաջխաղացքին համար, որովհետեւ ան չէ յաջողած ճնշել ու սանձել Իսրայելի դէմ յարձակումներ գործող ծայրայեղականներ: Դեկտեմբերէն ի վեր, Իսրայելեան ուժերն ու հրասայլերը շրջափակած են Արաֆաթը՝ պայն արգելափակուած պահելով Ռամալլայի գրասենեակներուն մէջ:

### ՊՈՒՇ ՄԵՊՍ ԸՆԱՊԱՏՈՒԹԻՒՆ ՍԸ ԿԸ ԿԱՏԱՐԷ

Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշ երէկ ըսաւ, որ Շարոնի յայտարարութիւնը՝ Արաֆաթը 1982ին սպաննելու մասին, չի նպաստեր Միջին Արեւելքի խաղաղարար ճիգերուն: Պուշ ըսաւ, որ խաղաղութեան համար լաւագոյն ճամբան՝ գործընթացը առանց շեղումներու շարունակելն է: Պուշ ասելուց, որ ամէն ինչ որ հունէն դուրս կը հանէ խաղաղութեան գործընթացը ահաբեկչութիւնն է, պոր պէտք է արմատախիլ ընել: Ան ըսաւ նաեւ, որ որքան արագ ըլլայ այդ մաքրագործումը, Շար.՝ էջ 10

### ՃՈՐՃ ՊՈՒՇ ԿԸ ՄՊԱՌՆԱՅ ՀԱՒԱՔԱԿԱՆ ՔԱՆԴՈՒՄԻ ԶԷՆՔԵՐ ԱՐՏԱԴՐՈՂ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ

Մ. Նահանգներ երէկ սպառնացած են իրենց սեփական արգարութիւնը պարտադրել երկիրներու, զորս կը նկատեն ահաբեկչութեան գորակից կանգնող երկիրներ, մինչ աֆղան ցեղախումբերու զինեալներ իրենց գոհերը կը թաղէին Աֆղանիստանի մէջ՝ երկօրեայ սաստիկ բախումներէ ետք:

Մ. Նահանգներ հրապարակած են ծրագիրներ՝ յաւելելու միջուկային տուրքերը ծախսելու զինուորական մարզին մէջ, մինչ Աֆղանիստանի փոխանցման կառավարութեան ղեկավար Համիտ Քարզայ կողմէն իր երկիրն մէջ ապահովութեան միջազգային ուժը ընդլայնելու:

Մ. Նահանգներու նախագահ Ճորձ Պուշ զգուշացուցած է հաւաքական քանգուժի գէնքեր արտադրող երկիրները, ըսելով, թէ անոնք նաեւ «հսկողութեան ցանկին վրայ» կը գտնուին: Մինչ այդ, Աֆղանիստանի մէջ յաղ-

թական փաշտուն ցեղախումբային ուժ մը երէկ իշխանութիւնը աւելի եւս կ'ամբարձրէր արեւելեան կարտէջ քաղաքին վրայ՝ կառավարութեան գորակցութիւնը վայելող իր մրցակիցները վտարելէ ետք:

Նոր նշանակեալ կառավարիչ Փատչան խան Զատրանի ուժերը քաջուած են քաղաքէն՝ բախումներէն ետք, որոնց ընթացքին 50 գոհ արձանագրուած է:

Միւս կողմէ, ՕԹԱՆի ընդհանուր քարտուղար Ճորձ Ռոպըրթսըն Հինգշաբթի օր յայտնած է, թէ զինակցութեան պաշտպանութեան փոխադարձ գորակցութիւնը անպայման պիտի չհասնի հոն, ուր անիկա պիտի զօրակցի ամերիկեան զինուորական որեւէ գործողութեան՝ պետութիւններու դէմ, զորս նախագահ Պուշ իբրեւ «չարու-

Շար.՝ էջ 2

### ԹՈՒՐԹԻԱ ՀԱՇՏ ԱԶՔՈՎ ԶԻ ԴԻՏԵՐ ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ՄԷՋ ՌՈՒՍԱԿԱՆ ՌԱՏԱՄԻՆ ԳՈՅՈՒԹԻՒՆԸ

Ազրպէյճանի «Մուսաւթ» ընդդիմադիր կուսակցութեան փոխ նախագահ Քապիլ Հիւսէյնի յայտարարած է, թէ Ազրպէյճան գտնուող Կապալա ռատարը տասը տարուան համար Ռուսիոյ վարձու տարը դժգոհութիւն յառաջացուցած է թրքական որոշ շրջանակներու մօտ, եւ թէ ռազմական այդ խարխիւին մէջ Ռուսիոյ ներկայութիւնը սպառնալիք է Թուրքիոյ համար: «Անոր պատճառը այն է, որ Ռուսիա կրնայ ռատարին միջոցով պիտուորական հետախույզութիւն կատարել Թուրքիոյ դէմ, հետեւաբար Թուրքիա պիտի անէ անհրաժեշտ քայլերը՝ չեղարացնելու համար այս սպառնալիքը», ըսած է Հիւսէյնի, ազրպէյճանական «Կապիթ 525» թերթին հետ հարցազրույցի մը ընթացքին:

Սոգուտ Ռուսիոյ շրջած է: «Թուրք պաշտօնատարներ այս հարցին կը մօտենան Ազրպէյճանի ազգային շահերու տեսակետէն: Որոշ քաղաքագետներ այս հարցին մէջ Ազրպէյճանի պիտուորները նոյնիսկ կ'արնչեն Լեռնային Ղարաբաղի տագնապին», ըսած է Հիւսէյնի, ասելը: Այնպէս, որ Թուրքիա ունէր Ազրպէյճանին առնչուող պիտուորական ծրագիրներ, սակայն այդ ծրագիրները այժմ անիրականանալի դարձած են: «Թէ՛ Թուրքիա, թէ՛ ՕԹԱՆ պոլշաւորութեամբ կը մօտենան այս հարցին: Կը կարծեմ, որ ՕԹԱՆ պիտի փորձէ վերահաստատել իր ներկայութիւնը շրջանին մէջ՝ Թուրքիոյ միջոցով, որովհետեւ ՕԹԱՆ երբեք համաձայն պիտի չըլլայ շրջանին մէջ Ռուսիոյ գերակայութեան: Իբրեւ պատասխան ռուսական այս քայլին, Թուրքիա կրնայ վարձել ազրպէյճանական պիտուորական խարխիւ մը, ինչպէս եղաւ վրաստանի պարագային», յայտնած է Քապիլ Հիւսէյնի:

### ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԴԵՍՊԱՆ ՕՐՏՈՒԷՅԸ



Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան երէկ ընդունեց Ազրպէյճանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Ճորձ Օրտուէյը: Դեսպանը նախագահին փոխանցեց Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշի ուղերձը: Հանդիպումին ընթացքին քննարկուեցան երկկողմանի յարաբերութիւններու խորացման առնչուող բազմաթիւ հարցեր: Կողմերը գոհունակութիւն յայտնեցին հայ-ամերիկեան միջկառավարական տնտեսական յանձնաժողովի աշխատանքներու նկատմամբ:

### ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԸՆԱՐԿՈՒՄ

Ռուսիոյ նախագահի աշխատակազմի պետին հրաւերով Մոսկուա կը գտնուի Հայաստանի նախագահի աշխատակազմի պետ Արտաշէս Թումանեան: Թումանեան հանդիպումներ ու

Շար.՝ էջ 2

### ՆԻՒ ԵՐՈՐԸԻ ՄԷՋ

### ԱԼԻԵՒ ԳԻՏԻ ՏԵՍԱԿՑԻ ԶԷՅՆԻ ԼԵՏ

Ազրպէյճանի նախագահ Հայտար Ալիեւ Համաշխարհային Տնտեսական Ֆորումին մասնակցելու համար Նիւ Եորք մեկնելէ առաջ երէկ յայտարարեց, թէ Ազրպէյճանի եւ Միացեալ Նահանգներու միջեւ ռազմական լայնածաւալ գործակցութիւն պիտի չհաստատուի: Ալիեւ ըսաւ, որ երկու երկիրներու գործակցութիւնը պիտի ըլլայ սահմանափակ տարողութեամբ. նշելով, որ Ազրպէյճանի տրամադրուելիք ամերիկեան

Շար.՝ էջ 2

**ԼՈՅՍ ՏԵՍԱԿ**

**ՀԱՅՐԵՆԻ  
ԶԱՒԱԽՔ**

«Ազրպէյճան» յատուկ հրատարակութիւն: 496 էջ:  
 • Ստանալու համար դիմել գրախանութներ՝ Համազգային, Նարեկացի, Ոսկեղար, Ուրֆալեան եւ Կոմիտաս:  
 • Բովանդակութիւնը տեսնել էջ 2:  
**ԳԻՆ՝ 15.000 Լ.Ո.**

### ՆԱԽԱՐԱՐ ԱՐԻՏԻ ԱՅՑԵԼԵՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հանրապետության նախագահ Կոր. Էմիլ Լախուտ երեկ ընդունեց տեղեկատվության նախարար Դավիթ Արիտին, որուն հետ քննարկեց ներքին և շրջանային վերջին իրադարձությունները:

Նախագահ Լախուտ նաև ընդունեց երեսփոխաններ Դավիթ Չապարբեր, Ժրպարան Թոքեր, Ուլիտ Իտուն:

Մարդկային իրաւանց խորհրդարանական յանձնախումբի նախագահ երեսփոխան Մարուս Զարեա, երեսփոխան Մոհամէտ Պերժուրի և Փարակուէյի մէջ արգելափակուած չորս իրանացիներու հարապատեւրուն պատուիրակութիւնը այցելեցին նախագահին և անոր ներկայացուցին անոնց ապօրինի ձերբակալութեան հարցը և Փարակուէյի 25 հազարնոց իրանացիներու գաղութին ներկայ իրավիճակը, շնորհակալութիւն յայտնելով նախագահին ցուցաբերած հետաքրքրութեան և հետապնդումին համար:

Նախագահ Լախուտ նաև ընդունեց նախկին երեսփոխան Իսմայիլ Սըքարիէն:

### ԱԼԻԵՒ ԳԻՏԻ ՏԵՍԱԿՑԻ...

Շարունակուած Ա. Էջէն

օժանդակութիւնը միայն 50 միլիոն տոլար է: Միւս կողմէ, Ալրպիճանի նախագահի աշխատակազմի արտաքին յարաբերութիւններու բաժանմունքի պատասխանատու Նովրույ Մամատով յայտարարեց, թէ Նիւ Եորքի մէջ Հայտար Ալիէի գլխաւորած պատուիրակութիւնը պիտի ունենայ շարք մը հանդիպումներ՝ նախագահներու և տնտեսական հաստատութիւններու ղեկավարներու հետ: Մամատովի համաձայն՝ Միացեալ Նահանգներու փոխ նախագահ Տիք Չէյնի առաջարկով տեղի պիտի ունենայ Ալիէի - Չէյնի հանդիպում մը: Կը նախատեսուի, որ ամերիկեացի պատկանական տնտեսական գրասենեակը գումարէ նիստ մը, Ալիէի մասնակցութեամբ:

### ՃՈՐՃ ՊՈՒՇ...

Շարունակուած Ա. Էջէն

Թեան առանցք» նկարագրած է: Ան ըսած է, թէ Մ. Նահանգներ ցոյց չեն տուած որեւէ փաստ, թէ կապ մը գոյութիւն ունի միւս երկիրներուն և Սեպտեմբեր 11 յարձակումներուն միջև: Պուշ նշած է յատկապէս Իրաքը, Իրանը և Հիւսիսային Բորնէան: Մ. Նահանգներու արտաքին գործոց նախկին նախարար Մատթէյն Օլպրայթ երեկ ըննադատած է Պուշի վարչակարգին արտաքին քաղաքականութիւնը, յատկապէս վերոնշեալ երեք երկիրներուն հանդէպ: Ան նաև հարցականի տակ առած է վարչակարգին մտտեցումը՝ Կուանթանամոյի աֆղան արգելափակեալներուն հանդէպ:

(ՌՈՅԹԸՐԸ)

### ՄԱՀԱԶԴ

- Տէր և տիկին Յակոբ Գորթեան և զաւակունք
- Տէր և տիկին Կարպիս Գորթեան և զաւակունք
- Տիկին Ռաբէլ Սանդիկեան
- Տիկին Ուսաննա Բրուտեան
- Տէր և տիկին Վահան Մաթոսեան
- Տէր և տիկին Գէորգ Սանդիկեան և զաւակունք
- Տէր և տիկին Րաֆֆի Սանդիկեան և զաւակունք
- Տէր և տիկին Չարբէհ Ատուրեան և զաւակունք
- և համայն ազգականներ կը գուժեն իրենց եղբոր, մօրեղբոր և հարազատին՝

ԱՐԱՍ ԶՈՐԹԵԱՆԻ  
(ՇՈՒՇԱԿ՝ ԶԵՍԱԿ, 1922ԻՃ)

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 30 Յունուար 2002ին, Ֆրեզնոյի մէջ:

●Ներկայս ընդունիլ իբրև մահապղ:

### ՄԱՀԱԶԴ

- Տէր և տիկին Արրահամ Տէտեան և զաւակունք
- Տիկին Երանուհի Մանիսեան և զաւակունք
- Տէր և տիկին Սահակ Տէտեան և զաւակունք
- Տէր և տիկին Յակոբ Տէտեան և զաւակունք
- Տիկին Աննայի Բորթեան և զաւակը
- Տէր և տիկին Յովհաննէս Աճէմեան և զաւակունք
- Սողոմեան ընտանիք
- Եսայուր ընտանիք
- Մանիսեան ընտանիք
- Լէփեճեան ընտանիք
- Մանիսեան ընտանիք
- և համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, քրոջ և հարազատին՝

ՇՈՒՇԱՆ ՏԵՏԵԱՆԻ  
(ՇՈՒՇԱԿ՝ ՍԱԴԱՄԵԱՆ, 1921ԻՃ)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 31 Յունուար 2002, երեկոյեան, իր բնակարանին մէջ: Թուրքականութեան պաշտամունքը կատարեցաւ Ուրբաթ, 1 Փետրուար, կէսօրէ ետք ժամը 3:00ին ինքնօրէն Հայ Աւետ. եկեղեցոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Ֆրէն Շրպիէի Հայ Աւետ. գերեզմանատունը: ●Ներկայս ընդունիլ իբրև մահապղ: ●Ցաւակցութիւնները կ'ընդունուին Ուրբաթ 1, Շաբաթ 2 և Կիրակի 3 Փետրուար, հանգուցեալին աղջկան տիկին Երան Մանիսեանի բնակարանը, Նահր էլ Մոթ, «Հրքմէ» փողոց: Իսկ ներկուշաբթի 4 և Երեքշաբթի 5 Փետրուարին հանգուցեալին զաւակին՝ տեղ և տիկին Արրահամ Տետեանի բնակարանը, Ֆրեզնէ Շենուան, Պայլատա:

### ՅԱԲԵԼԵԱԼ ԱՐԺԵՒ ՏՈՒՐԸ...

Շարունակուած Ա. Էջէն

Նախարարը նաև ըսաւ, որ ելեկտրական հոսանքի հալթալթուածը բնականոն դարձած է, որովհետեւ բոլոր շրջանները կը ստանան օրական 18էն 20 ժամ հոսանք, բացառութեամբ Պէյրութի, որ կը ստանայ օրական 24 ժամ ելեկտրականութիւն: Տնտեսական վիճակը դարձանելու համար անհրաժեշտ է քաղաքական որոշում, որուն շուրջ ընդհանուր համաձայնու-

թիւն պէտք է գոյանայ, ըսաւ ան: Նախարար Պայտուն ընդգծեց, որ կառավարութեան հաշիւ պահանջելու երկիրը ձախող կառավարութիւնը պարտի անոր դիմաց ծառայութիւններ մատուցել քաղաքացիներուն և իրաւապաշտ շրջաններուն:

Կառավարութեան նոր տուրքերը մերժող իրանացիները յոյս ունին, որ պետութիւնը կ'ապահովէ կենսական ծառայութիւնները՝ բժշկական, ուսումնական, ենթակառոյցի և նման անյետաձգելի կարիքները, որոնք էական են հայրենիքին վերականգնումին և ժողովուրդը՝ աղքատութեան փրկելու համար, ըսաւ ան:

Շէյխ Քապալան նկատել տուաւ, որ պետական պատասխանատուները սկսած են խոստովանել պետական վարչամեքենայի փտած իրավիճակը, և կը յուսանք, որ այս խոստովանութիւնը բարեկարգումի սկիզբը կը հանդիսանայ:

### ՎԱՐՉԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՌԵՒՏՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻԻՆԵՐՈՒ ՊԱՏՈՒԹԻՎԿՈՒԹԻՎԸ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երեկ ընդունեց առեւտրականներու միութիւններու պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ Նատիւ Ասիի:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան ընդհանուր տնտեսական պայմանները՝ յաւելեալ արժեքի տուրքի գործադրութեան լոյսին տակ, ինչպէս նաև կարգ մը ապրանքներու մաքսատուրքը մեղմացնելու կառավարութեան քայլը: Ասի ըսաւ, որ առեւտրական մարզը գոհունակութիւն յայտնած է գնումներու արտաքին առեւտրական կիսափորձեան այս քայլին համար, որ պիտի կապուրէ շուկան:

Առեւտրական մարզը յանձնառու է ինքնաբերու ձեւով հսկելու սակերուն, և լաւագոյն ծառայութեան ու բարձրագոյն որակի ապրանք նուազագոյն սակերով հրամցնելու, ըսաւ ան:

●ԵԼԵԻՄՈՒՏՔԻ նախարարութեան յաւելեալ արժեքի տուրքի գործադրութեան խմբակը հաղորդեց, որ մինչեւ նախանցեալ գիշեր, 7230 դիմում ներկայացուցած են ընկերութիւններ, որոնք կ'ուզեն արձանագրուիլ յաւելեալ արժեքի տուրքի գործադրութեան համար:

### ՇՆՈՐԸԱԿԱԼԻԵ

●Տիար Սիբայիլ Տեմիրճեան և զաւակները՝ Սիսակ և Մարիան, իրենց շնորհակալութիւնը կը յայտնեն բոլոր անոնց, որոնք ամսամբ, ծաղիկաբացով և նուրբատուրեթամբ մասնակից եղան իրենց կնոջ և մօր՝ ՆՈՒՐԻՉՍ ՏԵՄԻՐՃԵԱՆԻ մահուան սուգին:

### ԳՐԱԲՈՒՄ ՕՐ

ԱԶԳ. ԼԵՒՈՆ  
ԵՒ ՍՈՖԻԱ  
ՅԱԿՈԲԵԱՆ  
ՔՈԼԵՃ  
BRUNCH  
"MONROE"  
ՊԱՆԴՈՎ, 12 ՄԱՐՏ 2002

**HAIGAZIAN UNIVERSITY**  
In coordination with  
**AL BUSTAN FESTIVAL**  
Cordially invites you to a lecture  
On  
**How Extraordinary was Mozart and His Don Giovanni?**  
By  
**Maestro Harout Fazlian**  
Thursday, February 7, 2002–7:00 p.m.  
Haigazian Auditorium–Kantari

**ԵՐԱՆԿԱՅԻՇԱՍԿ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐՈՒ  
ՀՈԳԵՎԱՆԳԻՍ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՉ**  
Վաղը՝ Կիրակի, 3 Փետրուարին, յաւարտ Ս. պատարագի, Անթիլիասի Մայրավանքի «Չարեհեան» յուշարձան - դասփարսին մէջ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ի հանգիստ Կիլիկեան Ս. Աթոռի երանաշնորհ հայրապետներուն՝ ՍԱՀԱԿ Բ., ԲԱԲԳԷՆ Ա., ՊԵՏՐՈՍ Ա., ԳԱՐԵԳԻՆ Ա., ՉԱՐԵՎ Ա., ԽՈՐԷՆ Ա. ԵՒ ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱՅՈՂԻԿՈՍԵՆԵՐՈՒ ԵՒ ննջեցեալ միաբան հայրերու հոգիներուն համար:  
Կը հրաւիրուին մեր ժողովուրդի պաւակները՝ իրենց յարգանքը ընծայելու երջանկայիշատակ հայրապետներուն և բարեյիշատակ միաբաններուն:  
ԴԻՒԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

**ՎԱՐԴԱՆԱՅ  
ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ**  
Նախագահութեամբ՝  
ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ.  
ԽԱՉԵՐԵԱՆԻ  
(Առաջնորդ Լիբանանի Շայոց թեմին)  
Կազմակերպութեամբ՝  
**ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ**  
Կը բանախօսէ՝  
ՊՐՆ. ԿԱՐՕ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ  
Մասնակցութեամբ՝  
ԼԻԱՆԱՆԻ ԹԵՄԻ  
ԿԻՐԱՎԵՐԵԱՆ ԳՊՐՈՑՆԵՐՈՒ  
ԱԶԿԵՐՏՈՒԹԵԱՆ  
Տեղի կ'ունենայ Հինգշաբթի, 7 Փետրուար 2002ին, երեկոյեան ժամը 7:00ին, «Յակոբ Տեմիրճեան» սրահին մէջ:  
ՀՐԱԻՐ

### ՌՈՒՍԻՈՅ ԴԵՄՊԱՆԸ ԱՅՑԵԼԵՑ ՆԱԽԱՐԱՐ ՀԱՄԱՌԻՏԻ

Լիբանանի մէջ Ռուսիոյ դեսպան Պորիս Պոլոնի երեկ արտաքին գործոց նախարար Մահմուտ Համմուտի հետ տեսակցելէ ետք յայտնեց, որ Մոսկուա առնչութիւն ունեցող կողմերու հետ քայլեր կ'առնէ կանխարգիլելու Լիբանան - Սուրիա - Իսրայէլ եռանկիւնէն ներս որեւէ մագլցում և պահպանելու համար այս շրջանի կայունութիւնը:

Պոլոնի ըսաւ, որ նախարար Համմուտի հետ քննարկած է շրջանային վարագումներին ու երկկողմանի յարաբերութիւնները, Տուսայի նախագահին Լիբանան տուած այցելութեան լոյսին տակ:

Ռուս դիւանագետը նաև գոհունակութիւն յայտնեց հարաւի մէջ ՄԱԿի խաղաղարար ուժերու կեցութիւնը երկարաձգելու գծով ՄԱԿի մէջ Լիբանանի և Ռուսիոյ ներկայացուցիչներու գործակցութեան համար:

### ՔԱՆԻՄԸ ՏՈՂՈՎ

●ՀԱՆՐՕԳՈՒՏ շինութեանց և փոխադրամիջոցներու նախարար Նաժիպ Միքաթի կոչուողէն բոլոր հայրենասէրներուն՝ ոչ մէկ ճիգ չունայել, որպէսզի երկիրը կարենայ դուրս գալ այս դժուար և վզայուն հանգրուանէն:  
Պէտք է յստակօրէն իրարմէ պանապանեք մէկ կողմէ մեր մեծ պատասխանատուութիւնը և ժողովուրդին ճշմարտութիւնը ըսելու մեր յանձնառութիւնը, և միւս կողմէ՝ ապատեղեկատուութիւն ստեղծող յայտարարութիւնները, ըսաւ ան:  
●ՊԵՏՐՈՒԹԻ Առեւտրականներու Միութիւնը երեկ հրապարակուած հաղորդագրութեամբ մը իր անդամներէն պահանջեց գրաւոր դիմում ներկայացնել վարչութեան, լաւագոյն պայմաններով ապրանքներու օդանավով ներածումի և արտածումի դիւրութիւն ստանալու համար, միութեան և «Թի. Էմ. Էլ.» օդանաւային ընկերութեան միջեւ համաձայնութեան հիմամբ:

### ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆ...

Շարունակուած Ա. Էջէն

նեցած է Ռուսիոյ անվտանգութեան խորհուրդի քարտուղար Վլատիմիր Ռուշայլոյի, արտաքին գործոց նախարար Իկոր Իվանովի և փոխ նախարար Վալէրի Լոշչինսիի հետ: Քննարկուած են հայ-ռուսական յարաբերութիւններուն և շրջանային վերջին վարագումներուն առնչուող հարցեր:

**ՀԱՅՐԵՆԻ ԶԱՒԱՍՔ**  
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ  
Մէկ ապգ Վարանդ Փափագեան  
Ախալքալակի պայքարը Իտրէն  
Տաշիրի գաւառին բռնագրաւումը Իտրէն  
Ընդհանուր ակնարկ Հայաստանի հիւսիսային սահմանների վրայ Լէօ  
Չաւախքի պատմութիւն Աշոտ Մելքոնեան  
Չաւախքիցիները արեւմտահայ պատագրական պայքարում Աշոտ Մելքոնեան  
Ախալքալակի հայ համայնքի պատմութիւնը Փրոֆ. Կ. Գ. Ղաֆազարեան  
Տանջուած ժողովուրդի մը չքնաղ հայրենիքը՝ Վ. Աւագեան  
Չաւախքի արեւմտամարտին Չաւախքի սահմանները  
Հոգեւոր - եկեղեցական կեանքը Չաւախքում Աշոտ Մելքոնեան  
Նորօրէնյ հոգեւոր կեանքը հիւսիսային Չաւախքի աշխարհում Սանասար սարկաւազ Դուրիկեան  
Չաւախքի մշակութային կեանքը  
Չաւախքի գեղանկարչներու եռեակը Շայկագուն Ալվրցեան  
Չաւախքի աշուղները Մովսէս Ծիրանի  
Նշանաւոր Չաւախքիցիներ Չափար Բէշիշեան  
Չաւախքի կրթական համակարգը Եւս. Նաւոյեան  
Հայ մամուլը և գրատպութիւնը Չաւախքում և Մեխիթրում Վահան Մաղաթեան  
Բաց դարպաս՝ սահմանէն անդին Շողիկ Աւրգեան  
Չաւախքի պատմական յուշարձանները Սամուէլ Կարապետեան  
Վրաստանի քաղաքականութիւնը հայկական մշակութային կոթողների նկատմամբ Սամուէլ Կարապետեան  
Հայ - վրացական փոխ յարաբերութիւնները Թոստոմ  
Հայ - վրացական կնճիղը Արշակ Չամբան  
Մենք և մեր հարեւանները Արտաշէս Արեղեան  
Հայ - վրացական յարաբերութիւնները ժամանակակից փուլում Սերգէյ Շաբարեան  
Վրաստանի անկախութեան աղբիւրը և հայ - վրացական յարաբերութիւններուն հեռանկարը Թիքրատ Կիրակոսեան  
Թիքրատ Կիրակոսեան  
Իրաքի հայութիւնը Օֆելիա Գրիգորեան - Շահբազեան  
Արիպիայի հայկական համայնքը Չաւախքում  
Աջարական հանգոյց Չաւախքում  
Վրաց քաղաքական մտտեցումները Ախալքալակ - Ախալքալակ գոտու մահմեդական բնակչութեան հնդդի առնչութեամբ Սամուէլ Կարապետեան  
Իրաքի համազորակցութիւնը Ռուսաստանի դաշնութեան և Վրաստանի միջեւ Օ. Ս. Բելով  
Չէչենական խնդիրը վրաց - ռուսական յարաբերութիւններում Սամուէլ Կիրակոսեան  
Թուրքիա - Վրաստան - Արդեբեյան փոխ յարաբերութիւնների հեռանկարի հարցի շուրջ Էդուարդ Ղազարեան  
Վրաստանի և ԱՄՆի յարաբերութիւնները Ս. Ա. Միխայիլով  
Վրաստանի արտաքին քաղաքականութեան կերպարանափոխութիւնները Սերգէյ Շաբարեան  
Հայոս և Քարթլոս Լէոնտի Սրովիլի  
Ընդհանուր տեղեկութիւններ Չաւախքի մասին

### ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ԿԸ ՍՊԱՆՆԵ ԶԵՉԷՆ ԶԻՆԵԱԼՆԵՐ

Ռուսական բանակը առնուապս 48 չէջէն պինեալներ սպաննած է եւ հարիւրաւոր կասկածելիներ բանտարկած՝ շրջանին մէջ տեղի ունեցած մէկ շաբթուան գործողութիւններու ընթացքին, հաղորդած է «Ինթերֆաքս» լրատու գործակալութիւնը երէկ:

Անիկա ըսած է, թէ յաւելեալ 15 պինեալ՝ կամաւոր կերպով անձնատուր եղած է:

Ըստ գործակալութեան՝ ռուսական ուժերը կը փնտռեն պինեալներ, պէնք եւ պինամթերք՝ Արկուսի հովիտին շուրջ, ուր պինեալները շատ գործօն են:

Նմանօրինակ արշաւ մը տեղի կ'ունենայ Չէչէնիոյ երկրորդ մեծագոյն քաղաքին՝ Կուտերմէսի մէջ, ըսած է «Ինթերֆաքս»:

Միւս կողմէ, պինուոր մը սպաննուած է եւ երկրորդ մը վիրաւորուած՝ երբ անոնց ինքնաշարժը ակահի մը պատճառով պայթած է Օքթիպարսոյէ շրջանին մէջ՝ Ռուսիոյ գլխաւոր Խանքալայի խարխիսին ճամբուն վրայ:

(ՌՈՅԹԸՐԸ)

### ՔՈՒԷՅԹ ԿԸ ՓՈՐՉԷ ԳՈՅԵԼ ՔԱՐԻՂԻՆ ԲԱՅԸ

ՔՈՒԷՅԹ, 1 (ՌՈՅԹԸՐԸ).- Քուէյթի քարիւղի նախարարը յայտնեց, որ քանի մը օրէն կարելի կ'ըլլայ արտադրել բաւարար քանակութեամբ քարիւղ, շուկային մէջ գոցելու համար հանքի մը պայթումին պատճառով բացը:

Ատել Սուպահ ըսաւ, որ Քուէյթ այլ հանքերու արտադրութիւնը պիտի բարձրացնէ, որպէսզի քարիւղի տագնապ մը չստեղծուի:

Չորս կոտեր արձանագրուեցան Հինգշաբթի գիշեր, երբ Ռաուտաթէյնի հանքին մէջ ուժգին պայթում մը տեղի ունեցաւ: Պայթումը պատճառեց հրդեհ մը, որ տակաւին մինչեւ Ուրբաթ օր (երէկ) կարելի չէ եղած մարել: Պաշտօնատարներ ըսին, որ պայթումը արկածի մը արդիւնքն էր եւ թէ խափանարարական արարքի հետեւանքը չէ: Անոնք աւելցնեցին, որպայթումը պատահած է խողովակներէն մէկէն կատարուած հոսքին պատճառով:

Փոխ վարչապետ շէյխ Սապահ Ահմէտ Սապահ ըսաւ, որ կառավարութիւնը անմիջապէս պիտի ձեռնարկէ վերաշինութեան աշխատանքին: Սակայն ան ցաւ յայտնեց ինկած կոտերուն համար:

Ռաուտաթէյնի հանքին պայթումին պատճառով քարիւղի սակերը յաւելում արձանագրեցին միջապային շուկային վրայ:

### ՆԵՂԿԱՍԱՆ - ՓԱՔԻՍԱՆ ԲԱՆՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ

Ճ Ա Մ Ո Ւ Ի «Կրակ բանալու ալ յայտարարեց չկայ, բացի երէ անոնք զինամթերք եւ յայտնուցիկ նիւթեր ունին եւ կ'ուզեն զանոնք փճացնել», ըսաւ Ֆերնանդէս «Յուսնայքը պիտու զօրհանուի» լրատու գործակալութեան:

Միւս կողմէ, Նեղկասպանի վարչապետ Արալ Պեհարի Վաճիֆայի Ուրբաթ օր մերժեց ընդառաջել Փաքիստանի առաջարկին Նեղկասպան - Փաքիստան երկխօսութիւն եւ բանակցութիւններ. կանխարգիլելու համար սահմանային բախումները:

«Փաքիստան միջոց կ'առաջարկէ, որ երկիրներուն երկուսն էլ զինուորները կ'ունենան ինչո՞ւ համար յիստի հանդիպում անոնք, երբ հանդիպումը աղարակներով իրարմէջ ըսաւ Վաճիֆայի:

### Հ. Յ. Դ. ՌՈՒԲԷՆ ԱՎՈՒՄԻՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԴԱՍԱԽՍՈՒԹԻՒՆ  
Նիւթ՝ TVA  
(ՅԱԿԵԼԵԱԼ ԱՐԺԵՔ ՏՈՒՐԸ)  
Կը գեկուցէ՝

ՊՐՆ. ՅԱՎՈՐ ԱՐՐԱՀԱՄԵԱՆ  
(Երդուեալ հաշուեքնիչ)

Տեղի կ'ունենայ երկուշաբթի, 4 Փետրուար 2002, երեկոյեան ժամը ճիշդ 8:00ին, Նորաշէնի Հ. Յ. Դ. «Ռուբեն» ակումբի սրահին մէջ:

### ՍԱԿԱՐԱՆ

Պէյրութի սակարանին մէջ օտար դրամանշններու փակման սակագիները հետեւեալներն էին երէկ.

Սուրիական թղթակի	31,50 - 33,50	լ.ն.
Իրաքեան տինար	50,00 - 51,00	լ.ն.
Պահրէյնեան տինար	3990,00 - 4010,00	լ.ն.
Քուէյթեան տինար	4906,42 - 4910,42	լ.ն.
Յորդանանեան տինար	2125,42 - 2129,24	լ.ն.
Ա. Մ. Էմիրութեան տինար	408,43 - 412,42	լ.ն.
Սէուտական ռիալ	399,90 - 403,99	լ.ն.
Օմանեան ռիալ	3900,00 - 3930,00	լ.ն.
Քաթարեան ռիալ	412,15 - 416,15	լ.ն.
Եգիպտական կիւն	323,72 - 327,72	լ.ն.
Անգլիական սթերլին	2125,70 - 2129,11	լ.ն.
Գերմանական մարք	678,47 - 682,84	լ.ն.
Հոլանտական ֆլորին	602,66 - 606,14	լ.ն.
Ֆրանսական ֆրանք	200,76 - 204,98	լ.ն.
Չեխիական ֆրանք	877,35 - 881,52	լ.ն.
Պելճիքական ֆրանք	33,63 - 34,42	լ.ն.
Դանիական քրոն	230,20 - 250,22	լ.ն.
Սպանական փէպէթա	8,02 - 9,04	լ.ն.
Թրքական լիրա	3,62 - 3,64	լ.ն.
Կիպրական փաուստ	2249,85 - 2253,17	լ.ն.
Իտալական հապար լիր	687,65 - 691,70	լ.ն.
Ճափոնական հապար եէն	11034 - 11038	լ.ն.
Ամերիկեան հապար ֆրանք	2450 - 2451	լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1514,00	լ.ն.
Քանադական տոլար	947,40 - 951,85	լ.ն.
Աւստրալիական տոլար	764,85 - 766,70	լ.ն.
Եւրօ	1295,95 - 1299,16	լ.ն.

### ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	105,000 - 115,000	լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	91,000 - 101,000	լ.ն.
Օմանեան մէկ ոսկի	80,000 - 90,000	լ.ն.
Մեքսիքական փէսոս	474,000 - 498,000	լ.ն.
Մէկ քիլոգրամ ձոյ ոսկի	12,300,000 - 12,800,000	լ.ն.
Մէկ օսն ոսկի	280,65 - 284,85	\$
Մէկ օսն արծաթ	4,23 - 4,27	\$

### ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

Գիցի Ա. ճշդում Գիցի Բ. ճշդում		
Ա. կարգի	4 2/8	4 2/8
Բ. կարգի	5 00	5 00
Բաժնեթուղթ		

### ԼԻԲԱՆԱՆ

ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԷՐԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻՔՆԱՐԿԷ ՏՈՒՐԵՐՈՒ ՀԱՐՅԸ

Ճարտարարուեստի սեփականատէրերու միութենէն «աղբիւրներ» լրատու միջոցներու կատարուած յայտարարութիւններու մէջ նկատել տուին, որ մաքսատուրքերու նուազումը կատարուած յայտարարութիւնները կը հակասեն միութեան անցեալին տրուած խոստումներուն, երբ կ'ըսէր, որ տեղական արտադրութիւններուն մաքսատուրքով պաշտպանութիւնը պիտի շարունակուի, որպէսզի կարենան մրցիչներածուած ապրանքներու սակերուն հետ, եւ առիթ տալու, որ լիբանանեան ճարտարարուեստի մարզը պատրաստուի Եւրոպայի հետ գործընկերութեան համաձայնագիրի գործադրութեան:

Միութիւնը յառաջիկայ Չորեքշաբթի օր պիտի գումարէ ժողով մը՝ քննարկելու համար այս հարցերը:

Ինչ կը վերաբերի յաւելեալ արժէքի տուրքի երէկուան գործադրութեան, ըստ փոքր առեւտրականներուն՝ անիկա աղէտ մը պիտի ըլլայ արդէն իսկ վիրաւոր տնտեսութեան եւ շատ աւելի պատճառ պիտի դառնայ, որ շուկան անդամայնօնուի:

### ՌՈՒՍԻԱ ԿԸ ՄԵՐԺԷ ԱՅԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ ԴԵՍ ՊԱՏԵՐԱԶՍԸ ԾԱԲԱԼԵԼ

ՄՈՍԿՈՒԱ, 1 (ՌՈՅԹԸՐԸ).- Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանով Ուրբաթ օր վերահաստատեց, որ Մոսկուա կը մերժէ ահաբեկչութեան դէմ պատերազմը ծաւալել դէպի այլ երկիրներ:

Իվանով դիտել տուաւ, որ հակաահաբեկչութիւն արշաւը պէտք չէ դառնայ պատերազմ մը առանձին պետութիւններու, ժողովուրդներու կամ կրօններու դէմ: Ան ըսաւ նաեւ, որ որեւէ պարագայի տակ անընդունելի է, որ ահաբեկչութեան դէմ պայքարը օգտագործուի քաղաքական շահեր նուաճելու համար որոշ երկիրներու եւ վարչակարգերու դէմ:

### ԱՆԳԱՐԱ ԿԸ ԾՐԱԳՐԷ ԿԵՐԱՏԵՍՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿԵԼ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԻՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Անգարա կը ծրագրէ վերատեսութեան ենթարկել շրջանային իր ռազմավարութեան առաջնահերթութիւնները՝ շեշտը դնելով դրացի երկիրներուն հետ, որոնց կարգին՝ Ռուսիոյ, առեւտրական - տնտեսական յարաբերութեանց վարգազման վրայ, ըսած է պատկերասփիւռի «Էն. Թի. Վի.» կայանը:

Այս վերջինը յայտնած է, թէ նշեալ որոշումը կայացուած է Թուրքիոյ Ապահովութեան Խորհուրդի վերջին նիստին ընթացքին:

Թուրքիոյ նոր ռազմավարութեան թիւ մէկ առաջնահերթութիւններէն պիտի դառնան արդիւնաբերական արտադրութիւններու արտածումը եւ սահմանային առեւտուրը, որ սկսելու համար կը վերաբերի Իրաքի, Իրանի եւ Սուրիոյ հետ առեւտուրին:

(ԱՐՄԵՆՓՐԵՍ)

### ՄԱԿ ՅԱՒ ԿԸ ՅԱՅՏՆԷ ԱԲԽԱԶԻՈՅ ԱՆԼՈՅԾ ՏԱԳՆԱՊԻՆ Ի ՏԵՍ


ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդը Հինգշաբթի օր ցաւ յայտնած է, որովհետեւ Վրաստանի եւ անջատողական Աբխաչիոյ շրջանին միջեւ գոյութիւն ունեցող բանավէճը լուծելու գծով որեւէ յառաջդիմութիւն չէ արձանագրուած:

Անիկա երկու կողմերուն կոչ ուղղած է միջին եպրի լուծում մը գտնել՝ Աբխաչիոյ ապագայ կարգավիճակին մասին:

Խորհուրդը նաեւ յաւելեալ 6 ամսուան համար երկարաձգած է ՄԱԿի դէտերու խմբակին կեցութիւնը: Անոր 106 պինուորները Վրաստանը եւ Աբխաչիան բաժնող գոտիին վրայ հաստատուած են:

(ՌՈՅԹԸՐԸ)

### ԳՈՐԾԱԾԵՅԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱՉՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



ԻՆՉՊԵՍ ԳՈՐԾԱԾԵԼ FUEL CARD-Ը  
Չեր ինքնաշարժին պենզին, մագնիս, իւղին, ինչպէս նաեւ լուալու համար, վճարումին հետ միաժամանակ սերկայացուցէ FUEL CARD-ը, այս ձեւով ձեր մասնակցութիւնը բերած կ'ըլլաք տնտեսական ծրագիրներու յաջողութեան:

ԻՆՉՊԵՍ ՍՍԱՆԱԼ FUEL CARD-Ը  
FUEL CARD-ը կընք ստանալ հետեւեալ կեդրոններէն.  
● ՍՖՇԻԼԻ գրասենեակ, Պորճ Կամուտ  
● Կամազգայիցի գրախանութ, Պորճ Կամուտ  
● Գրատուն Caravelle, Չալքա  
● Գրատուն Sava, Այնճար  
● Գրատուն Կոմիտաս, Պէյրութ  
● Obelix հաստատութիւն, Անթիլիաս

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 քիլին:

Սագուրի սպասարկութեան համար հեռաձայնել՝ 04-715111, 04-715222 եւ 04-715333 քիլերուն:

ՔԱՐՏԸ ԿԸ ՍՍԱՆԱԼ ԶՐԻՕՐԵԼ  
ԱՐԺԷ-ՔԱՐՏԻ ՆՈՒԹԵՐՆԵՐ ԵՒ ԻՆՔՆԱՇԱՐԺ ՄԸ

**Հ. Բ. Ը. Մ. - Հ. Ե. Ը.**  
ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԿԵԳՐՈՆ ՄՇԱՎՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲ  
ՍՐԲՈՅ ՎԱՐԴԱՆԱՆՅ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ  
ԸՆԹԵՐՅՈՒՄ - ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ  
ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՄԲ՝ ԵՂԻԱ ԱՃԵՄԵԱՆԻ  
Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 6 Փետրուար 2002, երեկոյեան ժամը 7:30ին, «Ալեք Մանուկեան» կեդրոնին մէջ, Ուսթուր:

**ՀԱՆԴԻՍԱԴՈՐ ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ**  
Կիրակի, 3 Փետրուար 2002ին, Մարաշի Ադէտին 82րդ տարեկիցին առիթով, հանդիսաւոր Սուրբ Եւ Աճմահ պատարագ պիտի մատուցուի Սրբոց Զառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ:  
Պիտի նախագահէ եւ քարոզէ՝  
ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱԶԵՐԵԱՆ (Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի)  
Սկիզբ ժամերգութեան ժամը 7:30ին  
Ս. պատարագ ժամը 9:30ին  
Քարոզ ժամը 10:30ին  
Նոգեհանգիստ ժամը 11:30ին  
Սիրով կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու սոյն հոգեպարար արարողութեան:

ՄՐԵՈՅ ԸԱՌԱՍՆԻՅ ՍԱՆԿԱՆՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԱՂԱՎԱՆՈՒԹԻՒՆ





# Գրական Էջ

## ԱՆՈՒՐԱԽ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

### ՄԱՐՏԱՀՐԱԲԵՐԷՆ ԱՆԴԻՆ...

Արտերկրի հայ մշակույթի, բայց ի մասնաճյուղի սփիւռքահայ գրական-նութեան քառասմբակ նահանջը ազդարարող ձայներ յաճախ լսուեցան վերջին տարիներում: Հայ գիրքին լուսնահասակներին եւ սփիւռքահայ գրականութեան պայծառ լոյսին շիջումը աղաղակող այդ հմազանգները ստացան կրկնօրէն դառն շեշտ ու յուզականութիւն, երբ անոնք բխեցան տասնամեակներու կենսափորձով ու նիւթով, հաւատարմութեամբ ու հետեւողութեամբ նկարագիր ու դիմագիծ կազմած սփիւռքահայ գրողներու սրտին խորքէն՝ իրբեւ տարբեր նշմարիտ եւ դաժան իրականութեան ենթահողի վրայ արմատացած բացայայտ ճշմարտութիւնը ընդգծող խօսք:

Աւելի քան յիսուս տարիներու գրական վաստակով ծանրաբեռն ժիրալը Աթաբաթեանի եւ Նուպար Զարնուտեանի այս ուղղութեամբ կատարած «անուրախ խորհրդածութիւններ»ը, որոնցմէ բաղուած երկու հատուած կը հրատարակուին քովի սիւնակներով, արագ հաստատումներով ոչ միայն լուսարձակի տակ կ'առնեն անմիջական լուծման կարօտ համագայտից տագնապ մը, այլեւ պատասխանատուները, սփիւռքահայ մտաւորականները եւ նոյնիսկ արեւմտահայ գրականութեան ներկայով ու ապագայով մտահոգ ընթերցողները կը դնեն հարցին մասին լրջօրէն մտածելու անյետածը-գելի պարտաւորութեան տակ: Կը բաւե պահ մը տագնապը գետնի վրայ խորհրդածութեանց սեղանին վրայ եւ առաջին իսկ վայրկեանէն յստակ կը դառնայ, որ տագնապը գոտի հայկական չէ, ունի շատ աւելի խոր արմատներ եւ համաշխարհային տարողութիւն, որմէ անմասն չեն նոյնիսկ ամէնէն քաղաքակիրթ ընկերութիւնները՝ սքանտինաւեան երկիրներէն մինչեւ գերհզօր պետութիւններ: «Լատիտսոպոլիան մամուլ»ի օրըստօրէ ծաւալող կայսրութեան դիմաց (հետատեսիլ, համակարգիչ, համացանց, սիտի բոմ, վիտէօ քլիփ...), շատ բնական է, որ մեքենացած կեանքին գերին դարձած ժամանակակից մարդը արձանագրէր ծանր պարտութիւններ... Բարարարութեամբ իմացական նուազագոյն ճիշդ պահանջող լատիտսոպոլիան «պատկերային արձակ»ով:

Գիտե՞ք եւ կը հասկնանք բոլորս ալ, որ հայ գիրքն ու գրական մամուլը չեն կրնար հեռու մնալ մերօրեայ քաղաքակրթութեան ապրած այս տագնապէն: Սփիւռքի արեւմտեան թէ միջին արեւելեան գաղութներ, ներառելով Հայաստանը, բոլորն ալ, այս կամ այն տարողութեամբ, ենթակալ են համաշխարհային այս տագնապին: Տագնապը համընդհանուր է եւ պատճառները միայն նիւթակա կամ գործնական դժուարութիւնները չեն: Խնդիրը հարցերը մակերեսայնացնող մտայնութեան մտահոգիչ երեւոյթէն իսկ անդին կ'անցնի եւ կը հնչեցնէ ահագնագը հոգեմտաւոր այլասերումին:

Ո՛չ մէկ կասկած, որ այսօր ազգովին կ'ապրինք հոգեմտաւոր աղքատացման ահաւոր նգնաժամի մը մէջ, որուն հետեւանքով Հայաստանն ու Հայութիւնը կերտած բարոյական, ոգեկան, հոգեմտաւոր եւ քաղաքակրթական արժեքները կ'ենթարկուին ուղղակի եւ անուղղակի արժեզրկման, ուրացումներու եւ անպատասխանատու վերաբերումի: Դժբախտաբար, այս է իրականութիւնը եւ հայ մշակույթի անփոխարինելիութեան հաւատացող հայ գրողը, արուեստագետն ու մշակութային պատասխանատուն ստիպուած են շարունակել ցեղին ստեղծագործական գոյամարտը:

Մարտահրաւերը կ'ենթարդէ առարկայական եւ համապարփակ օտոնումով բնականութեամբ ու աշխատանք, փնտռուող ու լուծում, որուն բարոյական եւ նիւթական պարտաւորութիւնը կը ծանրանայ հայ ազգի նակատարով շահագրգիռ մեր բոլոր կառոյցներուն վրայ, բոլորին ուսերուն: Հաւասարապէս: Ամէնութեան բեւեռն է ժամ: Եւ հարիւր առ հարիւր համարադրութեամբ:

Ամենամոռայ ժամանակներուն եւ է՛ն անպահով պայմաններուն մէջ անգամ գիր ու գրականութիւն, մանրակարգչութիւն ու երաժշտութիւն, նարտապարտութիւն ու գիտութիւն, իմաստասիրութիւն ու կեանք կերտած հայ ժողովուրդը չի կրնար ձեռնածալ պաղարհուցութեամբ դիմաւորել նոր օրերու մարտահրաւերները, այնքան ստեղծողութեամբ եւ ազգին արգանքը, պայծառ է միտքը եւ տաք ու մաքրամարտը՝ մեքենայեան արիւնը:

Եւ աւելի քան ութսունամեայ ձերուցագարդ գոյգ գրագետներուն երիտասարդ տագնապը պերնախօս մէկ ապացոյցն է նաեւ վերոնշեալ ճշմարտութեան:

Ս. ԿԻՐԱՎՈՍԵԱՆ

... Մուժթ է սփիւռքահայ գրականութեան ապագան: Գաւաթը մինչեւ յատակը պարպեցինք թէ՛ զայն մինչեւ կոկորդը լեցուցինք՝ միեւնոյն է, տեսանելի, անփոփոխ իրողութիւնը այն է, որ Սփիւռքի մեր գրականութիւնը մարտահրաւէր դիմազրաւելու կարելիութիւններէն բոլորովին զուրկ՝ եւ ընկերակուցման ընկերակուցման եկած է այլեւս ու կանգնած պաշտպանութեան վերջին գիծերուն, ուր միայն աղէտ դիմազրաւելու պատեհութիւն կը տրուի իրեն:

Դժուարութիւններ կան, անպատեհութիւններ կան, - պիտի ըսէր լաւատես բարեմիտներէն մէկը: Դժուարութիւններ կան, անշուշտ որ կան, եղած են միտք, պիտի ըլլան տեւաբար: Սակայն անոնց, այդ դժուարութիւններուն բոլորը, ըլլան անոնք առ ի հետեւանք ներկայի հաղորդակցութեան միջոցներու կայծակնային արագութեամբ զարգացման ու տեղեկականացման, կեանքի, կենցաղի մեքենականացման թէ՛ գուարճութիւն, հաճոյք հետապնդելու սանձարձակութեան, այդ դժուարութիւններուն բոլորը զարգացեալ կոչուած երկիրներուն բոլորին յատուկ համայնական, ընդհանրական դժուարութիւն են ու կը դիմազրաւուին համայնական, ընդհանրական միջոցառումներով: Գիր ու գրականութիւն անկասկած որ կը խոչընդոտուին, սակայն գիրք մը աւելի, գիրք մը պահաս, միջոցագոյն գրականութեան կարաւանը կը շարունակէ իր ճամբան՝ առանց ճակատագրական փոփոխումներու հարց ստեղծելու:

Նոյնը չէ սակայն պարզապէս մեզի՝ հայերուն, սփիւռքահայ մեր գրականութեան համար: Վերոյիշեալ դժուարութեանց, անպատեհութիւններուն բոլորը անշուշտ իրենց բացասական անդրադարձը կ'ունենան Սփիւռքի հայութեան կեանքին, կենցաղին, յետոյ նաեւ ազգային, իմացական, գրական, գեղարուեստական եւ այլ կալ-

ւածներու գործունէութեանց վրայ, բայց՝ անդրադարձ, մակերեսային ազդեցութիւն միմիայն, առանց երբեք ճակատագրական հետեւանքներ առաջացնելու: Մակերեսային ալեկոծում մը, եւ այդքան միայն:

Իսկ այդ միւս «դժուարութիւնը» - եթէ երբեք դժուարութիւն պիտի անուանենք վերջինը՝ Փանտորայի սնտուկին ահաբեկող դաժանութիւն - սփիւռքահայ գրականութեան զոյուլթեանը սպառնացող ճակատագրական դժուարութիւն է: Պատուհաս, որ բառին բովանդակ իմաստով կը սպառնայ հիմերէն սարսել, խորհիւններէն քանդել ո՛չ միայն մեր ազգային դպրութիւնը, գիրքն ու գրականութիւնը, այլեւ՝ ազգային մեր անմիջական էութիւնը, իսկութիւնն անգամ: Սփիւռքահայ գրականութեան դիմազրաւած այդ պատուհասը ուրիշ ոչինչ է, եթէ ոչ՝ իրեն սնունդ, աւելի հայթայթող նախանութիւն, իր հիմնական ամրոցին՝ լեզուին պարտադրուած աղէտալի ընկերակուցման հանցանք: Մեր դարաւոր լեզուին իւրաքանչիւր նոր օր մեր աչքերուն դիմաց դաժանօրէն ողջակիզումը: Երեւակայեցէք գետ մը, որուն ալը ցամաքի սկսի յանկարծ: Երեւակայեցէք ծառ մը, որուն արմատները անբուժելի մէկ ախտով չորնալ սկսին...

Ի՞նչպէս կրնայ մէկը գրականութիւն մշակելու, գրականութիւն պահելու յաւակնութիւն ունենալ, երբ այդպէս հիմ ու արմատ խախտած են, երբ ալ ու աղբիւր չորնալ, ցամաքի կը սպառնան:

Կը բաւե աչք մը նետել այժմու հայահոծ կեդրոններու ազգային, մշակութային, գրական եւ այլ գործունէութեանց իրավիճակին վրայ՝ ճշտատեսութեամբ համար իսկոյն վերջ յիշուած տիւր իրականութեան ստուգութիւնը:

Վերջին երկու եւ քիչ մը աւելի տասնամեակներուն, Միջին Արեւելքի երկիրներու Սփիւռքը ինքն իր մէջէն ծնունդ տուաւ նոր սփիւռքներու: Ունեցանք յանկարծ անկա-

րելի, ահաբեկող հեռաւորութեամբ... Աւստրալիա, ունեցանք սառնամանիք Քանադա եւ կարգ մը այդպէս հեռու, հեռաւոր ցրուածութիւններէ ետք, ունեցանք հին աշխարհի նոր ցամաքներէն Քոլումբոսի արկածախնդրութեամբ յայտնաբերուած... Ամերիկա, իր Հիւսիսով, Հարաւով, Արեւելքով եւ Արեւմուտքով: Աւելի քան երկու տասնամեակ առաջ, հովերէն ջրուած յարդի շիւղերու նման հայեր եկած - ինկած են օտար, անհաղորդ, հեռու - հեռաւոր այս երկիրները, սակայն մինչեւ օրս ոգի ի բոսն կը ճգնին Լիբանանի, Սուրիոյ, Եգիպտոսի թէ՛ Պարսկաստանի իրենց նախկին կեանքը, կենցաղը վերակենդանացնել: Հին ու քաղցր օրերու խոցոտող կարօտով թէ՛ իրենց գաւազներուն սպառնացող այլասերման առաջըն առնելու միտումով, մշակութային, մարզական, բարեսիրական, գրական եւ այլ կազմակերպութիւններ, ինչպէս նաեւ հոյլ մը օրաթերթ, շաբաթաթերթ, պարբերաթերթ իրար կը հրմշտակեն, գիրք կը խաչածենեն, ճիշդ այնպէս՝ ինչպէս Միջին Արեւելքի նախկին կեդրոններուն մէջ: Բայց ահաւասիկ, այս նոր աշխարհի բոլորովին նոր, բոլորովին խորթ ու անհաղորդ պայմաններուն մէջ, հին ու քաղցր օրերու անդարձ կորուստին միտքաբանքը միայն կ'ապահովէ կարծէք այլեւս ինքզինքին աստանդական հայ մարդը, իր անցեալը յար եւ նման կրկնելով, անցեալի իր հանրային, հաւաքական կենցաղը ֆոթօքոփիի ճշգրտութեամբ վերականգնել ջանալով: Իր անցեալը որոնելով տեւաբար: Որովհետեւ, հակառակ այդ ջանքերուն, առաջին իսկ օրերէն տեղի տուած ու հիմնովին խախտած են անցեալի սովորութիւն, նիստ ու կաց: Մոռացութեան տրուած են ազգային

ԺԻՐԱՅՐ ԱԹԹԱՐԵԱՆ

(2001, Նիւ Եորք)

Շար.ը՝ էջ 10

## ԳԻՐՔԵՐՈՒ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ

«Ան որ կը սպաննէ մարդ մը, կը սպաննէ Աստուծոյ նմանութեամբ ստեղծուած բանաւոր էակ մը, բայց ան, որ կը փճացնէ լաւ գիրք մը, կը բնաջնջէ Բանականութիւնն իսկ», կը պատգամէ անգլիացի մեծ բանաստեղծ Ճոն Միլթընը:

Հին ժամանակներէ ի վեր, գիրքը շատ կողմէ նկատուած է նուիրական աւանդ եւ, Աստուծոյ իմաստութեան արտայայտութիւնը, մարդկութեան ներշնչարանը, իսկ ոմանց կողմէ՝ շարիքներուն մեծագոյնը, մարդոց երջանկութեան եւ ծրագրիներուն առջեւ ցուցող գերագոյն խոչընդոտը: Տգէտներուն եւ անբաններուն համար՝ թուղթերու տրցակ մը, որոնց վրայ շարուած են արտաոց, անիմաստ եւ անհասկնալի նշաններ:

Գիրքերը եղած են հակամարտութիւններու, յեղափոխութիւններու եւ պատերազմներու մեծագոյն գոհերը:

Արդի մարդկութիւնը բռնուած է մահուան մղձականքէն:

Որպէսզի հայութեան գետը շարունակէ հոսիլ, պէ՛տք է որ անոր սկունքները առատ ջուր ստանան: Այդ ջուրը կրնան հայթայթել միայն իր հոգածու գաւակները:

Յրանսացի ծանօթ փիլիսոփայ Ժան-Փոլ Սարթրը, որ էր նաեւ տաղանդաւոր գրող, տարձապահելով Փոլ Վալերիի մարդարէութեան, կը գրէ. «Ոչինչ մեզ կը վստահեցնէ, որ գրականութիւնը անմահ է: Աշխարհ կրնայ գոյատեւել առանց արուեստի եւ գրականութեան: Բայց աշխարհ կրնայ նաեւ գոյատեւել առանց մարդ արարածին»:

Ժան-Փոլ Սարթրը ըսել կ'ուզէ, որ գրականութիւնը նոյնքան արժէք ունի, որքան մարդ արարածը եւ այն մարդիկը, որոնք գրականութիւնը աւելորդ պարապմունք կը նկատեն, պարզապէս անպիտաններ են եւ քաղաքակրթութեան թշնամիներ:

Եթէ հարցը փոխադրենք հայութեան պարագային, պիտի ըսենք. «Աշխարհ կրնայ գոյատեւել առանց գրականութեան: Բայց հայութիւնը չի կրնար գոյատեւել առանց հայ լեզուի եւ գրականութեան»:

Հետեւաբար, նոյնքան արդար է ու տրամաբանական ցաւիլ Պէրլուցի աւերակներուն տակ թաղուած անմեղ գոհերու ճակատագրին, որքան մայրերու վրայ նահատակուող հայ գիրքերու լուսն ողբերգութեան:

Լիբանանի պարբերա մահացող օրեր, լիբանանահայերը տարտղնուեցան ու յարդի շիւղերու պէս ջրուեցան շատ հեռաւոր ափեր: Բարեբախտաբար, շատեր չխաբուեցան օտար ծովանոյններու կանչէն եւ կուրծք տուին փոփոխիկին՝ չկորսնցնելու համար այն փոքրիկ Հայաստանը, զոր կերտած էին իրենց գոհողութիւններով, գուրգուրանքով, բայց նաեւ արիւնով ու ջրովինքով:

Մնացողները Ֆրանսացի բանաստեղծին հետ կը կրկնէին. «Մեկնիլ՝ մեռնիլ է քիչ մը»: Մեռնիլ իր անցեալին համար, իր ժառանգութեան, իր սիրելիներուն, իր կերտած երկրորդ հայրենիքին համար:

Ամբողջ եօթնասուն տարի վայելեցինք այդ հիւրընկալ երկրին բարիքները: Հոն ապրեցանք ազատ ու ապահով, յարգուեցանք ու գնահատուեցանք, պահեցինք մեր ազգային դիմագիծը: Անոր կը պարտինք մեր տնտեսական նախանձելի վիճակը, մեր հայկականութիւնը, մեր ազգային լինելութեան ենթահողը: Եկեղեցիներ, դպրոցներ, մամուլ, հրատարակութիւն, թատրոն, մշակույթ, եւ այլն:

Լիբանան շատ բան տուաւ մեզի իր լաւ օրերուն, ասպարէզներ բացաւ մեր առջեւ եւ փոխարէնը մեզմէ ոչինչ պահանջեց:

Անոնք՝ որ հեռացան կամայ թէ՛ ակամայ, գիտէին, որ աշխարհի վրայ գրախտ գոյութիւն չունին: Գիտէին, որ օտար եւ նոյնիսկ ինքնազականի ափերուն վրայ դիւրին չէ գերոյն մեկնիլ, թէ՛ յաճախ անձեռն փրկուելու համար, մարդ կը բռնուի կազկուտի, թէ՛ Քարիպտիսի յորձանքներէն խուսափիլ փորձող նաւը կրնայ բախիլ Սկիւլլայի ապառաժին:

Բայց անոնք չէին գիտեր, որ Լիբանանէն մեկնելով պիտի կորսնցնեն իրենց հոգին, որ տեսակ մը մահ է:

«Մեկնիլ՝ մեռնիլ է քիչ մը», ըսած է բանաստեղծը:

Մնացողները գիտէին այդ, ուստի՝ իրենց հոգին չկորսնցնելու համար, նախընտրեցին տոկալ ծծումքի եւ երկաթի անձրեւներուն եւ դիմակալեցին առօրեայ նահատակութիւնը եւ մահը:

Յարգանք ու պատիւ անոնց, որովհետեւ անոնք յարողեցան կանգուն պահել այդ օճախը եւ վառ պահել հայութեան ջահը:

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԽՈՒՄԵԱՆ

(1998, Լոս Անջելէս)

### ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹԻՒՆ

Պահն ու ժամանակը քանի մը նախադասութիւններու մէջ արձանացուցած բանաստեղծութիւնները առհասարակ արժանացած են ընթերցողին յատուկ ուշադրութեան, երբ այդ տողերուն թոյլք տուած ժամանակէն կամ ենթահողէն վեր բարձրանալով՝ որսացած են մարդկային քանի մը մնայուն պարունակներ եւ զանոնք պատկերած բացարձակ ժամանակի պատառոն վրայ:

«Մշաճ թեմաներ»էն յուզիչ քերթուած մը հիւսելու գրողական ձիգը միշտ էլ, որ հասած է բարեպապատ արդիւնք: Հակառակ է ձիգը: Բարեբախտաբար, ծահանդուխտ յաջողած է իր այս բնութեան մէջ, երբ պարզ, բարախուն եւ պատկերաւոր քանի մը նախադասութիւններով կեանք տուած է բաւական պատան ամանորեան թեմային:

### ԼԱՒԱՏԵՍՈՒԹԻՒՆ

Օրերը անցան խօսուի ու անձայն Նահանջեց տարին, որ սիրուած՝ այնքան բերած էր յոյսեր ու երապներ նոր, Ափսոս՝ ետ տարաւ բերածներն աղուոր:

Գնաց ու փլայ հին տարուան վրան, թել-թել փաթթուած կծիկի նման, թելեր սեւ, ձերմակ, ոլորուն, թնճուկ. Ո՞վ կրնայ քակել հանգոյցն հանելուկ:

Օրերը անցան սայլի պէս երեք, Այդքան ծանր բեռ էզնի՞նչ շալկեր, Անիւներ թաղուած հողի կործանքի թաց, է՞պն էր լացողը, թէ հողը ցուած:

Օրերը անցան դանդաղ, յամրաբայլ, Սակայն խոստացան շուտ վերադառնալ, Լապտերով կոյսին՝ գիշերուան կէսին Սպասող արթուն տենչալի փեսին:

Հաշուեցի՞ր արդեօք համերը լեղի, Աչքերուդ լիճին շիթերը աղի, Թէ՛ քանի՞ գիշեր մնացիր արթուն, Եւ քանի՞ երապ խաբեց քեզ՝ առտուն:

Քանի՞ օր ուրախ եւ քանի՞ տխուր Ապրեցար արդեօք, գէթ հաշիւ մը տուր Ընկեր իմաստուն, բարեկամ անկեղծ Փո՛ւշն արդեօք շատ էր, թէ վարդերն անեղծ:

Նոր տարին դա՛րձաւ կու գայ ծիծաղով, Անտելու քեզ բարիքները ծով, Յայնժամ մանկացիր դուն ինչուրիշաբար, Համբուրէ աջը պատրանքին արդար...:

ՀԱՎԱՆԳՈՒՄՏ

14-15 Յունուար 2002



# Մանկապատանեկան

## ԵՐԲ ՄԱՐԴԷ ԽՕՍԵԼՈՒ ՄԿՍԱԻ...

Ես կը խօսիմ, դու՛ն կը խօսիս, ան կը խօսի... Մենք բոլորս շատախօսներ ենք: Սակայն ուրկե՞ կու գայ լեզուն:


Մի՛ փորձեր շանդ խօսիլ սորվեցնել, ան պիտի չկարենայ խօսիլ: Ան ծոյլ աշակերտ մը չէ. ան ինքզինքն հասկցնելու համար կը հաջի, պոչը կը շարժի, սակայն ան անկարող է որբեւէ բառ արտասանելու: Ինչո՞ւ, որովհետեւ անոր կողորդը մեր կողորդին պէս կազմուած չէ: Առաւել, անոր բերանը շատ երկար ըլլալով՝ անկարելի է, որ ան հնչէ նոյնիսկ շատ դիւրին բառեր, ինչպէս՝ «ուտել» կամ «գրել»:

Չորս միլիոն տարիներ առաջ, նախապատմական մարդիկը նոյն հարցը ունէին: Անոնց դէմքին վարի մասը դէպի առջեւ կը տնկուէր դունչի



Շնագրեան մարդը մեր նախահայրը չէ, այլ՝ շատ հեռու գարնիկ մը, որ կորսուած է 27 հազար տարիներ առաջ: 1,70 մէթր հասակ ունեցող այս անձը կրնար տաշել քարէ գործիքներ, իր մտելները թաղել եւ... խօսիլ:

մը նման: Անոնց խոչափողը շատ բարձր էր, եւ անոնց համար անկարելի էր ձայներ արտասանել, այսինքն՝ ձայնալարերուն արտաբերած ձայները փոփոխութեան ենթարկել իրենց կողորդով եւ լեզուով: Այդ ժամանակաշրջանին անոնք իրարու հետ կը հաղորդակցէին ձեռքերով, դիմախաղերով, մարմնի շարժումներով:



Արտայայտուելու համար խուլ-համրերը ձեռք կը գործածեն: Կարգ մը ձեռքեր կը ներկայացնեն բառեր կամ մախադանութիւններ, իսկ ուրիշներ՝ այրուբան: Իւրաքանչիւր գիրի կը համապատասխանէ ձեռքի մատներու ձեւը:

ներով կամ գոչիւններով, ինչպէս կենդանիները կ'ընեն: Հետեւաբար, զանազան մեր նախահայրերը յանկարծ «լեզու ելած» են:

Վստահաբար՝ ո՛չ մէկ օրէն միւսը: Լեզուն ծնած է աստիճանաբար, հետեւելով մարդու ֆիզիոլոգիական զարգացման հոլովութիւն:

Մտաւորապէս 300 հազար տարիներ առաջ՝ ան մարդիկը արդէն այսօրուան մարդոց կը նմանէին: Անոնց խոչափողը հաւանաբար քիչ մը իջած էր եւ անոնց լեզուն աւելի շարժուն դարձած էր: 1992ին, Սպանիոյ հիւ-

սիս արեւելքը գտնուող քարայրներու մէջ գտնուած հնագրեան մարդոց գանկերու նոր ուսումնասիրութիւնները փաստած են, որ անոնք ունէին շեմփանգէներու եւ արդի մարդոց ձայնային գործարանային գործարան մը: Այս գանկերը տակաւին պահած էին կարգ մը պատիկ ոսկորներ ակամբ շին մէջը, ինչպէս նաեւ՝ խոչափողը եւ լեզուն մկաններուն ամրացնող ոսկորը: Ըստ մասնագէտներու, հնագրեան այդ մարդիկը կրնային հնչել պարզ բառեր, բայց վստահաբար՝ մեզմէ շատ աւելի դանդաղ եւ անլրջտակ ձեւով: Անոնք չէին կրնար խրթին նախադասութիւններ արտասանել, ինչպէս՝ «կ'ուզեմ» հետո որսորդութեան երթալ, սակայն կրնային արտաբերել ձայներ, որոնք կը նմանցնէին բառերու իմաստին: Օրինակի համար, «կլու կլու» խմելու համար, «պանկ» երբ անոնք մէկուէն կը գարնեն, «ուֆ ուֆ» շուն մը կանչելու համար, ճիշդ ներկայի գծագրութեամբ ներկայացուող պատմութիւններուն մէջի արտայայտութիւններուն նման:

Ապա, ժամանակի րոնթացքին, լեզուն կը կատարելագործուի:

Պագգ... պագգ: Մեղուները իրարու հետ կը հաղորդակցին շատ կատարելագործուած լեզուի մը շնորհիւ: Երբ անոնցմէ մէկը կը գտնէ բեղմնափոշիով եւ նկատարով հարուստ դաշտ մը, ան փեթակ կը վերադառնայ իր ընկերներուն տեղեկացնելու համար: Ան կ'ընդհատուի կը դառնայ անոնց ըսելու համար, թէ խնձորը կը գտնուի մօտաւորապէս 100 մէթր անդին. կամ «8»ի ձեւով կը դառնայ՝ եթէ հեռախոսը լուրջաբար աւելի մեծ է: Առաւել, այս թիւին դիրքը ըստ արեւուն կը ձղէ հետեւելիք ուղղութիւնը:


Ապա, ժամանակի րոնթացքին, լեզուն կը կատարելագործուի:

Պագգ... պագգ: Մեղուները իրարու հետ կը հաղորդակցին շատ կատարելագործուած լեզուի մը շնորհիւ: Երբ անոնցմէ մէկը կը գտնէ բեղմնափոշիով եւ նկատարով հարուստ դաշտ մը, ան փեթակ կը վերադառնայ իր ընկերներուն տեղեկացնելու համար: Ան կ'ընդհատուի կը դառնայ անոնց ըսելու համար, թէ խնձորը կը գտնուի մօտաւորապէս 100 մէթր անդին. կամ «8»ի ձեւով կը դառնայ՝ եթէ հեռախոսը լուրջաբար աւելի մեծ է: Առաւել, այս թիւին դիրքը ըստ արեւուն կը ձղէ հետեւելիք ուղղութիւնը:

Այս ժողովին ունին մօտաւորապէս 7000 լեզուներ եւ բարբառներ, որոնք կը բաժնուին 300 մեծ ընտանիքներու:

Այս խումբերէն ամէնէն մեծը Եւրոպայի եւ Ասիոյ լեզուները խմբող ընտանիքն է: Ան կը պարունակէ բազմաթիւ փոքր խումբեր, ինչպէս՝ Հնդեւրոպականը, որուն մաս կը կազմեն հայերէնը, ֆրանսերէնը, լատիներէնը, անգլերէնը եւ սպաներէնը: Սակայն կարգ մը մասնազտներ կը մտածեն, թէ սկիզբը հաւանաբար գոյութիւն ունեցած է միացեալ մէկ լեզու:

Այս անջին լեզուին առաջին բառը կ'ենթադրուի, որ եղած է «թիւ», որ կը նշանակէ «մէկ» կամ «մաս»: Այս կարծիքը դիւրին հնչուող բառը կամայ - կամայ փոխուած է լատիներէն «տիւրիթ» եւ անգլերէն «թօ» (այժմ «Յինկըր» կոչուող) բառերը յառաջացնելով:



Լեզու Ոսկոր Խոչափող

կան «լեզուն»՝ ըստ իր կարիքին: Օրինակի համար, անոնք, որոնք կ'ապրէին հիւսիսային ընկերի շրջանին մէջ, բազմաթիւ բառեր կը հնարեն ձեռքով ներկայացնելու համար. բան մը, գոր պիտի չընեն անպանելի, ինչպէս՝ Իւրաքանչիւր խումբ պիտի սկսի նաեւ գործածական կարգ մը բառեր հնչել տարրեր ձեւով: Այս ձե-



Պագգ... պագգ: Մեղուները իրարու հետ կը հաղորդակցին շատ կատարելագործուած լեզուի մը շնորհիւ: Երբ անոնցմէ մէկը կը գտնէ բեղմնափոշիով եւ նկատարով հարուստ դաշտ մը, ան փեթակ կը վերադառնայ իր ընկերներուն տեղեկացնելու համար: Ան կ'ընդհատուի կը դառնայ անոնց ըսելու համար, թէ խնձորը կը գտնուի մօտաւորապէս 100 մէթր անդին. կամ «8»ի ձեւով կը դառնայ՝ եթէ հեռախոսը լուրջաբար աւելի մեծ է: Առաւել, այս թիւին դիրքը ըստ արեւուն կը ձղէ հետեւելիք ուղղութիւնը:

Այս ժողովին ունին մօտաւորապէս 7000 լեզուներ եւ բարբառներ, որոնք կը բաժնուին 300 մեծ ընտանիքներու:

Այս խումբերէն ամէնէն մեծը Եւրոպայի եւ Ասիոյ լեզուները խմբող ընտանիքն է: Ան կը պարունակէ բազմաթիւ փոքր խումբեր, ինչպէս՝ Հնդեւրոպականը, որուն մաս կը կազմեն հայերէնը, ֆրանսերէնը, լատիներէնը, անգլերէնը եւ սպաներէնը: Սակայն կարգ մը մասնազտներ կը մտածեն, թէ սկիզբը հաւանաբար գոյութիւն ունեցած է միացեալ մէկ լեզու:

Այս անջին լեզուին առաջին բառը կ'ենթադրուի, որ եղած է «թիւ», որ կը նշանակէ «մէկ» կամ «մաս»: Այս կարծիքը դիւրին հնչուող բառը կամայ - կամայ փոխուած է լատիներէն «տիւրիթ» եւ անգլերէն «թօ» (այժմ «Յինկըր» կոչուող) բառերը յառաջացնելով:

## ՓՈՐՁԱՊԵՍ

### ՊԻՏԻ ԸՆԿՂՄԻ՞, ԹԷ՛ ՈՉ



ՊԵՏՐ ՈՒՆԻՍ  
Կերպընկալէ շին, թուղթի մետաղէ բռնիչ մը (աթաշ), չոր մելանի թափանցիկ գրիչ մը (հանել մէջի մելանը եւ կափարիչը), կպչուն երիզ, ջուր:

1) Շիշը ջուրով լեցուր՝ վերը միայն քանի մը սանթիմետր օդ ձգելով:

2) Գրիչին ծայրի ծակը գոցէ կպչուն երիզով: Սուր ծայրին վրայ ամրացուր աթաշը: Ան իբրեւ ծանրութիւն պիտի ծառայէ գրիչը ուղղահայեաց ձեւով պահելու համար:

3) Գրիչին միւս ծայրին վրայ պատիկ գամի ձեւով կափարիչը հանէ: Գրիչը ջուրին մէջ դիր, մինչեւ որ անոր երեք քառորդը լեցուի, ապա դարձեալ գամի ձեւով կափարիչը անցուր: Ան պէտք է ուղղահայեաց ձեւով ծփայ շիշին մէջ: Եթէ այս երեւոյթը չես նշմարել, գրիչին մէջի ջուրին պակասեցուր կամ մէջի ջուրը աւելցուր:

4) Շիշը գոցէ եւ գայն սեղմէ ձեռքով՝ ըթմամտիդ եւ միւս մասներուը միջուկ: Գրիչը պիտի ընկղմի: Երբ սեղմելէ կը դադրիս, ան դարձեալ պիտի բարձրանայ:



ԻՆՉՊԵՍ

Շիշին մէջ ջուրը կը փորձէ վերագրաւել գրիչին առած տեղը եւ գայն վեր կը հրէ: Ասիկա կը կոչուի Արքիմէտեան մղում: Սկիզբը գրիչը կը ծփայ, որովհետեւ անիկա շատ աւելի թեթեւ է, քան այս ուժը: Սակայն երբ շիշին վրայ կը ճնշես, կը ճնշես նաեւ ջուրին վրայ: Հետեւաբար ան գրիչին մէջ կը մտնէ՝ անոր մէջ գտնուած ջուրին վրայ ճնշելով: Այս աւելուող հեղուկով գրիչը կը ծանրանայ, եւ... կ'ընկ, կ'ընկ, կ'ընկղմի: Երբ ճնշելէ դադրիս, ջուրը գրիչին դուրս կ'ելլէ: Ան իր նախկին ծանրութիւնը կը վերագտնէ եւ դարձեալ կը բարձրանայ: Սուղանաւը նոյն սկզբունքով կը բանի: Ան որ մարմինը ջուրով կը լեցնէ սուղուելու համար եւ գայն կը պարպէ դարձեալ մակերես բարձրանալու համար:




## ԱՇԽԱՐՀԻ ԼԵԶՈՒՆԵՐԸ

Այժմ գոյութիւն ունին մօտաւորապէս 7000 լեզուներ եւ բարբառներ, որոնք կը բաժնուին 300 մեծ ընտանիքներու: Այս խումբերէն ամէնէն մեծը Եւրոպայի եւ Ասիոյ լեզուները խմբող ընտանիքն է: Ան կը պարունակէ բազմաթիւ փոքր խումբեր, ինչպէս՝ Հնդեւրոպականը, որուն մաս կը կազմեն հայերէնը, ֆրանսերէնը, լատիներէնը, անգլերէնը եւ սպաներէնը: Սակայն կարգ մը մասնազտներ կը մտածեն, թէ սկիզբը հաւանաբար գոյութիւն ունեցած է միացեալ մէկ լեզու: Այս անջին լեզուին առաջին բառը կ'ենթադրուի, որ եղած է «թիւ», որ կը նշանակէ «մէկ» կամ «մաս»: Այս կարծիքը դիւրին հնչուող բառը կամայ - կամայ փոխուած է լատիներէն «տիւրիթ» եւ անգլերէն «թօ» (այժմ «Յինկըր» կոչուող) բառերը յառաջացնելով:

**ԲԱՅՈՒԱԾ Է ԱՐԴԵՆ**  
**TECHNO VISION**  
KODAK EXPRESS  
ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱՏՈՒՆԸ  
• Կարտանկան եւ ձեռնարկներու - video երիզահանում:  
• Իւրաքանչիւր նկարահանման հետ մէկ ֆիլմ եւ ալպոմ մը ձրի:  
• Սկայրի յանձնում՝ 10 վայրկեանէն:  
• Passportի նկարի յանձնում՝ 2 վայրկեանէն:  
Հասցէ. - Զալքայի օրոսքրատ, MAGIC FIREի կից:  
Հեռ. 01-888829 եւ 03-615028, առաւօտեան ժամը 6:30էն մինչեւ երեկոյեան ժամը 8:00:  
Բաց է Կիրակի օրերը մինչեւ կէսօրուան ժամը 1:00:


## Ժ Ա Մ Ա Ն Յ



1-50 կետերը իրարու միացուր՝ գտնելու համար պահուած պատկերը:



Կրնա՞ս օգնել մամա ձուկին՝ հասնելու իր կորսուած ձուկին, առանց հանդիպելու վտանգաւոր ընգղային:



Կրնա՞ս ձանցնալ այն վեց կենդանիները, որոնք միասին կը կազմեն այս տարօրինակ եակը:



**Պատրաստե՛ք ձՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ**  
«ԱԶԳԱԿ»ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ  
«ԱԶԳԱԿ»ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն. - 258526, 260115 եւ 241274:  
**ԱՃՃԵԱՆ ԹՈՒՐԶԻ ԵՐԶԱՊՏՈՅՆԵՐԸ**  
• St. Valentine, ԿԻՊՐՈՍ 12-16 Փետրուար 275 \$  
• 1-8 Մարտ ԵՐԵՒԱՆ. Թիւրք Կալէպէ՛ն՝ 399 \$, Պէրուրե՛ն՝ 445 \$  
• Ս. Յարութեան տօնին առիթով ԿԻՊՐՈՍ, 29 Մարտին 1 Ապրիլ՝ 299 \$, իսկ ԿԻՊՐՈՍ եւ ԵԳԻՊՏՈՍ 29 Մարտին 3 Ապրիլ՝ 425 \$  
• Սփիւռը-Վայրենիք Բ. համաժողովին եւ Կայստան Հիմնադրամի 10ամեակին առիթով, ԵՐԵՒԱՆ 24-31 Մայիս, Թիւրք Կալէպէ՛ն՝ 420 \$, Պէրուրե՛ն՝ 465 \$  
• Տեր Զօր - Մարկատ 21-24 Ապրիլ՝ 80 \$  
Հեռ. 01-261177, 240654 եւ 03-233978:



# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



# ԱՇԽԱՐՀ



## ԼԻԲԱՆԱԻ ՖՈՒԹՊՈՒԼ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

### ՎԱՂԸ՝ ԱՂԼԻ ՍԱՅՏԱ - Հ.Մ.Ը.Մ.

Լիբանանի ֆուտբոլի ասոցիացիայի կողմից 11րդ հանգրուանին իր կատարելիք մրցումին, վաղը՝ Կիրակի, Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտբոլի ներկայացուցչական կազմը կը մեկնի հարավ, ուր Սուրի մեջ կը մրցի Ահլի Սալտայի դեմ: Մրցումը կը կատարուի ժամը 2:30ին:

Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտբոլի խումբը, որ ցարդ իր կատարած տարբեր մրցումներուն արձանագրած է երկու հաջողություն եւ կրած՝ ութ պարտություն, անպայման կարիքը ունի երեք կետի:

Հետեւաբար, Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկներէն կը սպասուի հարաւի մեջ արձանագրել իրենց առաջին յաղթանակը, վստահաբար իրենց համակիրներուն ներկայութեան, որոնք Կիրակի օրուան իրենց արձակուրդէն օգտուելով՝ պիտի ուղղուին Սուրի Քաղաքապետարանի դաշտ, քաջալերելու համար Հ.Մ.Ը.Մ.ի տղաքը:

Գագաթի ձեռքբերումը պիտի ըլլայ երկու մեծամեծ համակիրներ ունեցող խումբերուն՝ Նըժմէի եւ Անսարի միջեւ, որ տեղի կ'ունենայ վաղը՝ Կիրակի, Մարպական Աւանի դաշտին վրայ, ժամը 4:45ին:

Ստորեւ՝ 11րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը:

ՄԱՍԻՆ	ԺԱՄ	ԴԱՇՏ
Հ.Մ.Ը.Մ. - Ախա Ալէյ	2:30ին	Պ. Համուտ
Նասիհ - Պըրժ	2:30ին	Ճունիէ
Թ. Սուր - Ահա	2:30ին	Սուր
Սաֆա - Սաժէս	4:45ին	Պէյրուք

ՄԱՍԻՆ	ԺԱՄ	ՍՈՒՐ
Ա. Սալտա - Հ.Մ.Ը.Մ.	2:30ին	Սուր
Շ. Սահէլ - Սալամ	2:30ին	Պէյրուք
Նըժմէ - Անսար	4:45ին	Մ. Աւան

11րդ հանգրուանին նախօրեակին, դասաւորումը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը:

ԽՈՒՄԲ	Մ.	Յ.	Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԵՏ
1.- Սաժէս	10	7	2	1	28	19	23
2.- Նըժմէ	10	6	3	1	22	8	21
3.- Ախա	10	6	3	1	17	8	21
4.- Սահէլ	10	6	3	1	16	9	21
5.- Սաֆա	10	6	1	3	19	11	19
6.- Թ. Սուր	10	4	5	1	21	8	17
7.- Ահա	10	4	4	2	15	11	16
8.- Ախա	10	5	1	4	12	11	16
9.- Պըրժ	10	3	3	4	14	16	12
10.- Անսար	10	3	3	4	13	15	12
11.- Հ.Մ.Ը.Մ.	10	1	3	6	11	21	6
12.- Ահլի Ս.	10	1	1	8	9	24	4
13.- Հ.Մ.Ը.Մ.	10	-	2	8	6	19	2
14.- Նասիհ	10	-	2	8	5	28	2

## ՄՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈՒԼ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

### 23րդ ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ՝ ԱՅՍՕՐ ԵՒ ՎԱՂԸ

Սպանիոյ ֆուտբոլի ասոցիացիայի կողմից 23րդ հանգրուանի մրցումներուն, Պարսելոնա (9րդ) ձեռքբերական մրցումը ունի կատարելիք, երբ այցելէ վտանգաւոր դիրքի վրայ գտնուող Թեներիֆէի (18րդ) դաշտը: Զակատագրական այն իմաստով, որ պարտութեան մը պարագային, Պարսելոնայի մարզիչ Քարլոս Բեքսէ կրնայ կորսնցնել իր պաշտօնը, հակառակ անոր որ վերջին երկու մրցումներուն, ակումբին նախագահը՝ Խուան Կասփար կը փորձէր զօրավիզ կանգնիլ անոր:

Պարսելոնայի դիրքը գրաւող Ռէյալ Մատրիտ, որ այժմ եօթ կէտի առաւելութիւն ունի Պարսելոնայի վրայ, հիւրը պիտի ըլլայ վտանգաւոր դիրքի վրայ գտնուող Էսփանիոլի (17րդ): Մայրաքաղաքի կազմը բաւական հանգիստ կրնայ դաշտ ներկայանալ, նկատի ունենալով, որ անիկա երկու օր առաջ ապահովեց Սպանիոյ ֆուտբոլի բաժնի մրցաշարքին (ժանտի) թագաւորի բաժնի անունով ւարտական մրցումին իր տոմարը, կիսաարտակազմի դարձի մրցումին 3 - 0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Աթլէթիքո Պիլպան: Աւարտականին, որ տեղի պիտի ունենայ «Սանթիակո Պէրնաս-պէտ»ի մէջ, Ռէյալ Մատրիտ պիտի մրցի Տեփորթիւ Բորուսայի դեմ (Մարտ 6ին):

3րդ դիրքը գրաւող Տեփորթիւ Բորուսա, որ իր դաշտին վրայ պիտի հիւրընկալէ 5րդ դիրքը գրաւող Ալաւէսը, պիտի փորձէ այլ պարտութիւն մըն ալ չկրել:

Ստորեւ՝ 23րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը:

ՄԱՍԻՆ	ԺԱՄ
Ռէյալ Մատրիտ - Վիարէալ	19:30ին
Մայորքա - Սելթա Վիլո	21:30ին
Տեփորթիւ Բորուսա - Ալաւէս	21:45ին
Թեներիֆէ - Պարսելոնա	22:00ին
Ռայո Վալեքանո - Սելթա	22:30ին

ՄԱՍԻՆ	ԺԱՄ
Էսփանիոլ - Ռէյալ Մատրիտ	18:00ին
Մալաղա - Լաս Փայմաս	18:00ին
Օսասունա - Ռէյալ Մարաղոսա	18:00ին
Ռէյալ Պէթիս - Ռէյալ Վալադոլիտ	18:00ին
Վալենսիա - Աթլէթիքո Պիլպաս	21:00ին

## ՊՈՒՆՏԸՍԼԻԿԱ

### ՎԱՂԸ՝ ՊԱՅԵՐ ԼԵԿԵՐՔՈՒՋԸ - ՊԱՅԵՐՆ ՄԻԼԵԻՆ ԳԱԳԱԹԻ ՃԱԿԱՏՈՒՄ

Գերմանիոյ ֆուտբոլի ասոցիացիայի կողմից 20րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Պայէր Լեկերքուզըն, վաղը՝ Կիրակի ճակատագրական մրցումը մը ունի կատարելիք, երբ այցելէ 5րդ դիրքը գրաւող Պայէրն Միլնիթի դաշտը:

Հակառակ անոր որ Պայէր այժմ ութ կէտի առաւելութիւն ունի Պայէրնի վրայ, սակայն հիւր կազմին համար յաղթանակ արձանագրելը կը նկատուի բաւական դժուար, որովհետեւ անիկա 1989էն ի վեր յաղթական չէ կրցած վերադառնալ Միլնիթի:

Պայէրն թէեւ ունի հինգ բացակայ մարզիկներ (չորսը վիրաւոր, իսկ միւսը՝ կախակայութեամբ), սակայն Փաուլօ Սերժոնի եւ Ռիլի Սանիոյ վերա-

դարձը որոշ չափով կրնայ յոյս ներշնչել խումբին: Կախակայութեամբ մարզիկը պիտի ըլլայ Միքայէլ Թառնաթ:

Լեկերքուզընի պարտութեան պարագային, Պորուսիա Տորթմունտ յոյս ունի գրաւելու պարագլուխի դիրքը, անշուշտ եթէ յաջողի յաղթական վերադառնալ Վոլֆսպուրկի (10րդ) դաշտէն: Այս եղանակին օտար դաշտերու վրայ լաւագոյն արդիւնք արձանագրած է Տորթմունտ: Անիկա արձանագրած է եօթ յաղթանակ եւ կրած՝ միայն մէկ պարտութիւն:

12րդ դիրքը գրաւող Համպուրկ, որ ցարդ կրած է ինը պարտութիւն, պիտի հիւրընկալէ 1860 Միլնիթը (8րդ): Հակառակ իր դաշտին վրայ ձեռնարկուելուն, Համպուրկ կրնայ դժուարութիւններու առջեւ գտնուիլ,

որովհետեւ անոնց երկուքին միջեւ վերջին 14 հանդիպումներուն ընթացքին Համպուրկ կրցած է միայն երկու յաղթանակ արձանագրել:

Ստորեւ՝ 20րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը:

ՄԱՍԻՆ	ԺԱՄ
Քէօլն - Քայլերթալտըրն	16:30ին
Շալքէ - Պորուսիա Մէտշըն	
Հերթա Պերլին - Յրայպուրկ	
Վոլֆսպուրկ - Պոր. Տորթմունտ	
Համպուրկ - 1860 Միլնիթ	
Վերտըր Պրեմըն - Շթուրկարթ	
Նիւրնբերկ - Քոթլու	

ՄԱՍԻՆ	ԺԱՄ
Հանպա Ռուսթը - Չանքթ Փաուլի	
Պայէրն Միլնիթ - Պայէր Լեկերքուզըն	

## ԱՆԳԼՈՅ ՖՈՒԹՊՈՒԼ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

### ՎԱՂԸ՝ ԼԻԾ - ԼԻՎԵՐՓՈՒԼ

Անգլիոյ ֆուտբոլի ասոցիացիայի կողմից 25րդ հանգրուանի մրցումներուն, Պարսելոնայի դիրքը գրաւող Մանչեսթըր Յունայթըդը, որ այժմ մէկ կէտով կը գերազանցէ իր մրցակիցը՝ Արսենալը, իր դաշտին «Օլդ Թրէֆորթ»ի մէջ յիսուսի հիւրընկալէ Մանչեսթըր Յունայթըդը (13րդ): Իր կատարած վերջին 11 մրցումներուն միայն երկու յաղթանակ արձանագրած Մանչեսթըր Յունայթըդը իր յիսուսի դիրքը պահուիլու համար պիտի պայքարէ իր դիրքը պահելու համար անցողիկ յաղթանակի յաջողութեամբ:

Լիվերպոլի մրցումը մը ունի կատարելիք, երբ այցելէ 5րդ դիրքը գրաւող Լիվերպոլի դաշտը: Այս մրցումը, ինչպէս նաեւ Միլնիթի մրցումը, պեղի յիսուսի ունենալ վաղը Կիրակի, մինչ մնացեալ բոլորը այսօր կը կատարուին:

Ստորեւ՝ 25րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (փակագիծին մէջ նշուած են մրցումներուն ժամերը՝ Պէյրուքի ժամանակացոյցով):

ՄԱՍԻՆ	ԺԱՄ
Տերրի Քաունթի - Թորքենհամ	14:00ին
Արսենալ - Մանչեսթըր Յունայթըդ	17:00ին
Էվերթըն - Իփսուիչ	17:00ին
Տուլիս - Ասթըն Վիլա	17:00ին
Մանչ. Յունայթըդ - Չելսի	17:00ին
Նիւքասթըլ - Պոլըն	17:00ին
Ռիւսթ Նամ - Պլեյթըրն	17:00ին

ՄԱՍԻՆ	ԺԱՄ
Լիվ - Լիվերպոլ	14:00ին
Միլնիթ - Չարլթըն	18:00ին

**Հ. Մ. Ը. Մ. ԱՆԹԻԼԻԱՍԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲ**

Կը ներկայացնէ՝

**ՄՆՆՍՈՒՐ ՌԱՀՊԱՆԻԿ**

**ՄՈՒԹԱՆԱՊՊԻ Թատերգութիւնը**

Տեղի կ'ունենայ վաղը՝ Կիրակի, 3 Փետրուար 2002, երեկոյեան ժամը 8:30ին, «Տորիւմ տը Պէյրուք»ի մէջ:

• Տոմսերը ստանալ Համպուրկի գրախանութ Շաղոյեան կեդրոն (Պորթ Համուտ), «Ռոմէ Սիմոն» եւ «Միլառ» (Ժէլ Էլ Տիպ), JACK GIFTS եւ PRONTO հաստատութիւններ (Պորթ Համուտ):

• Մանրամասնութեանց համար հեռաձայնէլ 03-918372 թիւին:

## ՊԱՍԵՏՊՈՒԼ

### Հ. Մ. Ը. Մ. Ի ԱՂԶԿԱՆՑ ԿԱԶՄԵՐՈՒՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Լիբանանի պասքէթբոլի աղջկանց Բ. դասակարգի ասոցիացիայի կողմից 14րդ եւ վերջին հանգրուանի մրցումներուն, վաղը՝ Կիրակի, Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուքի աղջիկները Անդրանիկի դաշտին վրայ կը մրցին Շապապ Ռիաւիի դեմ: Մրցումը տեղի կ'ունենայ ժամը 11:00ին:

Իր կարգին, Հ.Մ.Ը.Մ. Պորթ Համուտի կազմը իր վերջին մրցումը կը կատարէ վաղը՝ Կիրակի, Ղապիթի դաշտին վրայ, Ֆիտա Սալտայի դեմ: Մրցումը տեղի պիտի ունենայ ժամը 13:00ին:

### ՔԱԼԶԻՕ ԻՆԹԵՐ - Ա. ԷՍ. ՌՈՍԱ ՊԱՅՔԱՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ ԱՌԱՋԻՆ ԴԻՐՔԻՆ ՀԱՍԱՐ

Իտալիոյ ֆուտբոլի ասոցիացիայի կողմից (Քալչիօ) 21րդ հանգրուանին, այսօր տեղի կ'ունենայ մէկ ձեռնարկ, մինչ մնացեալ ութ մրցումները տեղի կ'ունենան վաղը:

Ինթեր Միլան, որ այսօր պիտի հիւրընկալէ Թորինոն (9րդ), յաղթանակի մը պարագային առժամաբար պիտի գրաւէ պարագլուխի դիրքը, սպասելով վաղը տեղի ունենալիք Ֆիորենտինա - Ա. Էս. Ռոմա մրցումին արդիւնքին: Ինթերէն դարձեալ պիտի բացակային յառաջապահներ Ռոմալոն եւ Ալվարո Բեքոպա (վիրաւոր):

Ա. Էս. Ռոմա հանգիստ մրցումը ունի կատարելիք, երբ այցելէ նախավերջին դիրքը գրաւող Ֆիորենտինայի դաշտը: Կը սպասուի, որ մրցումը ըլլայ հետաքրքրական այն իմաստով, որ Կապրիլէ Պաթիստոն պիտի մրցի իր նախկին կազմին՝ Ֆիորենտինայի դեմ, որ կը գտնուի Բ. դասակարգ փոխադրուելու վտանգին տակ:

21րդ հանգրուանի զագաթի ձեռնարկը, սակայն, տեղի պիտի ունենայ Հոմի մէջ, ուր Լացիո Ռոմա (7րդ) պիտի հիւրընկալէ Ա. Ս. Միլանը (5րդ):

Լացիո պիտի փորձէ իր դաշտին վրայ լաւ արդիւնք մը արձանագրել, մասնաւորապէս իր խումբին խմբապետը՝ Ալեսանտրո Նետթա կը վերադառնայ դաշտ:

3րդ դիրքը գրաւող Եուվենթոս ակտիվ հանգիստ մրցումը ունի կատարելիք, երբ իր դաշտին վրայ հիւրընկալէ վտանգաւոր դիրքի վրայ գտնուող Լեչէն (16րդ):

Ստորեւ՝ 21րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը:

ՄԱՍԻՆ	ԺԱՄ
Ինթեր Միլան - Թորինո	21:30ին
ՎԱՂԸ	
Պոլոնիա - Վենեցիա	16:00ին
Պրեշիա - Փարմա	16:00ին
Ֆիորենտինա - Ա. Էս. Ռոմա	16:00ին
Եուվենթոս - Լեչէ	16:00ին
Փիաչենցա - Քիեւո Վերոնա	16:00ին
Ռատինգի - Փերուճիա	16:00ին
Վերոնա - Աթալանթա	16:00ին
Լացիո Ռոմա - Ա. Սէ. Միլան	21:30ին

## ՖՈՒԹՊՈՒԼ ԲԱՐԵՎԱՍԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ

### ՊՐԱՋԻԼ - ՊՈՒԼՎԻԱ՝ 6-0

Ֆուտբոլի միջազգային բարեկամական մրցումի մը ընթացքին, Պրապիլի ֆուտբոլի ակադեմիայի խումբը 6-0 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Պուլվիան:

Կոյսիսի մէջ տեղի ունեցած մրցումին, որուն ներկայ էր 45 հազար համակիր, Պրապիլի մարզիչ Լուիս Ֆելիպէ Սքոլարի դաշտ ներկայացուցած էր եօթ նորեկ մարզիկներ, որոնք առաջին անգամ ըլլալով կը կրէին ազգային խումբին շապիկը:

Պրապիլի վեց անպատասխան կոլերը նշանակեցին՝ Քրիս (43րդ), Ժիլպերթո Սիլվա (46րդ եւ 54րդ), Քլեպերտոն (63րդ), Ռաշիւկըն (72րդ) եւ Անտերսոն Փոլկա (86րդ):

Պրապիլի ֆուտբոլի ակադեմիայի խումբը այժմ պիտի մեկնի Ռիաւ, ուր յառաջիկայ 6 Փետրուարին, ֆուտբոլի բարեկամական մրցումը մը պիտի կատարէ Սէուտական Արաբիոյ դեմ:

Հ.Մ.Ը.Մ. ՊԵՏՐՈՒԹԻ ՄԱՍՆԱԾԻԿ

**ՌԵՃԱԴՐՈՒԹԻՒՆ**

«Իպրն» ղաւարակին մէջ կայանալիք ճաշերը - ղաւարակին 9 Փետրուար 2002ին

**ՏՈՄՍԵՐԸ ՄՊԱՌԱՑ ԵՆ:**

ԿԱՐԶՈՒԹԻՒՆ

